



Ամանորեան



Հայոց Նոր Տարին

Ըստ մեզ հասած տեղանքի, հայերն ունեցել են երեք Նոր տարի, որոնք կոչուել են Ամանոր, Նաուասարդ կամ Կաղանդ:

Վաղմջական ժամանակներում մեր նախնիները Նոր տարին դիմաորել են մարտի 21-ին, զարնանային գիշերահաւասարի օրը: Դա տարեգլխի պատահական ընտրութիւն չէր: Այդ հեռաւոր ժամանակների հայ քրմերը իրենց բազմամեայ դիտարկումներով նկատել են, որ բնութիւնը յարութիւն է առնում զարնան սկզբին: Այդ օրն էլ հայ մարդը դարձրել է Նոր տարի կամ Նոր տարեգլուխ էլ մշել այն ցնծալի տօնախմբութեամբ, որով փառաբանել է բնութեան զարթօնքը, հողագործի աշխատանքը, աղերսել աստածներին, որպէսզի բերքառատ դարձնեն տարին:



Հայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նաուասարդի 1-ը (օգոստոսի 11-ը):

Ըստ արանդութեան, Հայկ Աղեղնատրը Հայոց ձոր գաւառում սպանել է բռնակալ Բելին եւ ազատութիւն պարագետել իր տոհմին ու իր բոլոր հետնորդներին: Այդ յաղթութիւնը ենթադրաբար տեղի է ունեցել մեր քրականութիւնից առաջ 2492 քրականի օգոստոսի 11-ին: Այդ ժամանակահատից էլ հայերը Նոր տարին սկսել են տօնել օգոստոսի 11-ին:

Միջնադարի նշանաւոր տոմարագէտ Յովհաննէս Մարկաւազը հաւաստում է, որ եբրայեցիների տոմարի հիմնադիրը Մովսէսն է, իսկ հայկական տոմարի հիմնադիրը՝ Հայկը:

Օգոստոսեան տօնը հայերը կոչել են Նաուասարդ, որ նշանակում է նոր տարի [նա (նոր)+ ա (յօղակալ)+ սարդ (տարի)]: Նաուասարդի ամենամեծ հանդիսութիւնը տեղի էր ունենում Արածանի գետի ափերին, Նպատ լեռան փէշերին: Տօնախմբութեանը ներկայ էին լիմում երկրի թագաւորն ու թագուհին, նշանաւոր արքունականներ, զօրապետներ, նաեւ՝ հայկական բանակը: Այստեղ գալիս էին Հայաստանի համարեա բոլոր գաւառներից: Բայց դա սոսկ հաճոյք պատճառով տօնախմբութիւն չէր, դրա մէջ կար ազգային միասնութեան մեծ խորհուրդ: Տօնախմբութիւնը տեւում էր մի քանի օր: Դրանցից մէկը կոչում էր *գինարդուցի օր*: Այդ օրը մարդիկ խմում էին քացր հիւթեր, թեթեւ խմիչքներ: Նաուասարդատրների մէջ հարբեցողներ հազարներ էլ եղել: «Աստուածներն ամենից շատ որոն են թողնում հարբեցողի արտում» ասում է հայկական հնագոյն առածը: Այդ տօների ժամանակ նոյնիսկ ուտելիքն էլ չափաւոր է եղել: Իհարկէ, ուտելիքի մի ընդհանրական ցանկ չի եղել, որ պարտադիր լինէր Հայաստանի բոլոր կողմերի բնակիչների համար: Չպէտք է մոռանալ, որ Հայաստանը բազմակլիմայ երկիր է եղել եւ նոյնիսկ երկու իրար հարեւան գաւառներում նոյն բերքն ու բարիքը չեն ստացել: Տարբեր գաւառներում տարբեր ուտելիք են օգտագործել: Այնուամենայնիւ ուսումնասիրութիւնները հաւաստում են, որ Նոր տարւայ հայկական ուտելիքները ինչ-որ չափով միասնական են եղել, որով

բնորոշուել է բոլոր հայկական գաւառների Նոր տարւայ տօնատեղանքների ազգային բնոյթը: Այդ սննդատեսակների մէջ առաջինը եղել է հայկական կտրահատիկ ցորենը, որն աճել է միայն Հայաստանում: Եւ Նոր տարւայ սեղանին մեր նախնիները դրել են հեց այդ ցորենից պատրաստուած հաց, որպէսզի հայոց հեթանոս աստուածները բարեբեր դարձնեն Նոր տարին: Երեւի այդ հեռաւոր ժամանակների հաւատալիքի արդիւնք է հայկական ժողովրդական հին առածներից մէկը. «Նոր տարին հաց չեն փոխ առնում»: Ժամանակին այդ բառերն ընկալել են միայնակ. Նոր տարւայ սեղանին քո աճեցրած ցորենից թխած հացը պիտի դնես:

Հայկական հնագոյն առածներից մէկն էլ ասում է. «Առանց գինու Նոր տարին կը գայ, առանց նգածաղիկի՝ կուշանայ»: Հնում նգածաղիկը եղել է ամենահոշակաւ հայկական համեմունքը: Ախորժաբեր այդ ծաղիկը աճում էր Մասիսի լանջերին, այն քաղում եւ չորացնում էին Մասեացոսն ու ճակատք գաւառների հայերը եւ տարածում ամբողջ Հայաստանով մէկ: Եւ հայը, որ գաւառում էլ ապրելու լինէր, Նոր տարում ընթոշանում էր սքանչելի նգածաղիկը: Այդ սովորութեան մէջ էլ ազգային միասնութեան խորք կար: Նգածաղիկը բոլոր հայերին կապում էր Մասիսի հետ, ողջ հայ ժողովուրդն իրեն կապուած էր զգում Մասիսին, Միջնաշխարհին, այսինքն՝ հայրենիքի սրտին:

18-րդ դարում Միմէն Երեւանցի կաթողիկոսի տոմարով յունարի 1-ը ընդունեց որպէս Նոր տարւայ սկիզբ: Բայց մինչ այդ Հայաստանի տարբեր վայրերում եւ հայկական տարբեր գաղթավայրերում հայերն արդէն սկսել էին Նոր տարին մշել յունարի 1-ին: Մենք փորձում ենք հայկական դիմագիծ տալ այդ տօնին, այն զուգել մեր հնամենի Նաուասարդեան տօնի պաճուճանքներով, աշխատում ենք պահպանել բոլոր այն սննդատեսակներն ու ընկալելիքները, որոնք օգտագործել են մեր նախնիները ազգային Նոր տարին մշելիս: Յունարի 1-ի ուտելիքների մէջ մտնում են Ն տառով սկսուող մի քանի սննդամթերք. նգածաղիկ, նուռ, նաշիկ (ալիւրից թխած հաց), նուշ եւ այլն: Ասենք, որ որպէս տօնական կոչուող ուտելիք են ընտրել Ն սկզբնատառով, որպէսզի յարմարեցնեն տարւայ անունը՝ Նոր տարի, Նաուասարդ:

Էին Հայկական ամսանունները

Հին հայերը առաջնորդել են Բուն Հայկա քրականով, ըստ որի տարին ունէր 12 ամիս (իւրաքնչիւրը՝ 30 օրով) եւ 13-րդ (լրացուցիչ) մէկ ամիս (5 օրով): Ահաւասիկ Բուն Հայկա օրացոյցը.

Նաուասարդ	Արեգ
Հոռի	Անեկան
Մահմի	Մարերի
Տրէ	Մարգաց
Քաղոց	Հրոտից
Արաց	Անելաաց
Մեհեկան	

Հայոց ամսանունները դիցաբանական ծագում ունեն: Որոշ տոմարագետներ գտնում են, որ հայոց տոմարի ամիսները կոչուել են Հայկ Նահապետի 12 ուստերի եւ դուստրերի անուններով:



Ամանորեան



Հին Հայկական Օրանունները

Անուններ են ունեցել նաեւ հայկական ամսայ բոլոր 30 օրերը եւ Աւելեաց ամսայ 5 օրը: Ահա դրանք.

- | | | | |
|-----|-----------|------|-----|
| 1. | Արեգ | . | Արա |
| 2. | Հրանդ | մագդ | |
| 3. | Արամ | . | Ման |
| 4. | Մարգար | ի | |
| 5. | Աիրանք | . | Ասա |
| 6. | Մագդեղ | կ | |
| 7. | Աստղիկ | . | Մաս |
| 8. | Միհր | խս | |
| 9. | Չոպարեր | . | Անա |
| 10. | Մուրց | հիս | |
| 11. | Երեզկան | . | Արա |
| 12. | Անի | գած | |
| 13. | Պարխար | . | Գրգ |
| 14. | Վանատուր | ուռ | |
| 15. | Գիշերաւոր | . | Կոր |

Աւելեաց ամսայ օրանունները

- Փայլածու
- Արուեսակ
- Հրատ
- Լուսնթագ
- Երեսակ

Այս օրանունները ոչ միայն արտացոլում են Հայկա-կան լեռնաշխարհի նշանաւոր տեղանունները, այլեւ հա-յոց խորովի դիցարան են:

Հայկական Ժամանունները

Հայերը ունեցել են ոչ միայն իրենց ազգային ամսա-նուններն ու օրանունները, այլեւ օրը (գիշերն ու ցերեկը) բաժանել են 24 հաւասար մասերի (ժամերի) եւ դրանց տւել հետեւեալ անունները.

Յերեկայ ժամանուններ

Այգ	Շանթակող
Ծայգ	Հրակաթ
Չայրացեալ	Հուրփայլեալ
Ճառագայթեալ	Թաղանթեալ
Շառափղեալ	Արագոտ
Երկրատես	Արփող

Գիշերայ ժամանուններ

Խաւարակ	Հաւաթափեալ
Աղջամուղջ	Գեղակ
Մթացեալ	Լուսաճեմ
Շաղաւտ	Առաւօտ
Կամաւտ	Լուսափայլ
Բաւական	Փայլածու

Երբ եւ ինչպէս են տօնում Նոր տարին տարբեր երկրներում

Տարբեր երկրներում մարդիկ տարբեր, բայց ամե-նուրեք ուրախ ու տօնական են դիմատրում Նոր տարւայ

զալուստը, որի հետ կա-պում են ապագայի նը-կատմամբ իրենց ունե-ցած երազանքները, յոյ-սերն ու իղձերը:



Շողկաստանում հա-ւատալիք կայ, թէ ամբողջ տարին կանցնի այնպէս, ինչպէս նրա առաջին օրը: Եւ մարդիկ այդ

օրւան մի առանձին խնամքով են նախասպատրաստում: Լուսամուտներն ու դռները զար-դարում են լամպերով, իսկ շենքի առջեւ ծաղիկներ են նկարում՝ ի նշան հիւրասիրութեան:

Այդ օրը հարկաւոր է լինել քաղաքավարի, արգելում է բարկանալ եւ անվայել խօսքեր ասել: Ոչ ոք չպէտք է չար լինի, նեարդայնացած կամ նեղացած:

Ճապոնացիների մօտ հնուց ընդունւած է, որ Նոր տարւայ կէսգիշերին քաղաքների ու գիւղերի եկեղեցի-ների զանգերը 108 հարւած են տալիս: Այժմ այդ զանգերի ձայնը հաղորդում է ռադիոյով: Չանգի վերջին հարւածից յետոյ քնում են, որպէսզի լուսաբացին արթնանան, դուրս գան փողոց եւ Նոր տարին դիմատրեն ծագող արեւի առաջին ճառագայթների հետ. նրանք, ովքեր չեն կարողանում արթնանալ, չեն կարող յոյս դնել, թէ Նոր տարին իրենց համար յաջողակ կը լինի:

Նոր տարւայ տօնական սեղանի համար տանտիկին-ները պատրաստում են աւանդական ճաշատեսակը՝ բրնձէ թխածք, որն առատութեան խորհրդանիշ է հա-մարում ընտանիքի համար, եփում են երկար, բարակ մակարոններ, որոնք երկար կեանքի խորհրդանշան են, սիսեռ, որը առատութեան խորհրդանիշ է, իսկ ձկներից նախընտրում են ծածանը, որը ուժի խորհրդանիշ է հա-մարում: Տօնի առթիւ բոլոր ընտանիքներում ամէն չափի ու ձեռքի թոթօժ օձեր են պատրաստում, վառ գոյներով ներ-կում եւ օդ են քոցում:

Վիետնամացիների մօտ ընդունւած է Նոր տարւայ գի-շերը բարեկամներին կիսածաղկած դեղձեմու ճիւղեր նի-րել: Ընտանիքներն իրենց բարեկամներով երկար նստում են խարոյկի մօտ՝ միմեանց հեքիաթներ, հետաքրքիր դէպքեր կամ պատմութիւններ պատմում: Ընդունւած է հա-մարել, որ վիետնամացիները Նոր տարւայ օրը (այլ ոչ թէ իրենց ծննդեան իսկական օրը) մի տարով մեծանում են:

Չինացիների Նոր տարւայ սեղանի վրայ անպայման կարճ կտրած նարգիզներ են լինում:

Սոնդոլիայում Չմեր պապին մման է անցեալ դարերի հովի: Նրա ձեռքին մահակ է, որով յաճախ չիկչիկաց-նում է, կողքին կախւած են աւանդական ծխախոտամա-նը, հրահանն ու կայծքարը: Նա հագած է մուշտակ եւ աղւեսի մորթոց մեծ փափախ:

Իրանում Նոր տարւայ տօնը զարման գալուստի տօ-նըն է: Այն սկսում է մարտի 22-ի կէսգիշերին: Քաղաք-ներում եւ գիւղերում որոտում են թնդանօթների ու հրա-ցանների կրակոցները: Այդ պահին բոլորն իրենց ձեռքին պահում են արծաթ մետաղադրամներ: Նա, ով այդ չի ա-նի, կարող է, ըստ ժողովրդական հաւատալիքների, ամ-բողջ տարին անցկացնել օտարութեան մէջ:

Նոր տարւայ առթիւ փոխում է տան կաւէ ամանե-ղէնը: Հինը ջարդում եւ նորն են գնում: Տօնակատարու-թիւնը



Ամանորեան



տետում է մի ամբողջ շաբաթ: Ընտանիքի ղեկավարն ընտանիքի անդամներին նոր զգեստներ է նւիրում: Տօնական սեղանին անպայման պէտք է լինեն սխտոր, քացախ, ծլած ցորեն, դեռահաս հասկերի հիւթ եւ լողացող կանաչ տերեւներով (ջրիկ) ճաշ: Յաճախ սեղանին դնում են կենդանի ձկնիկներով զարաթներ: Նոր տարին դիմաւորելու համար բնակիչները դուրս են գալիս փողոց, խարոյկ վառում եւ վրայով թռչում:

Գլխնեայում Նոր տարւայ առաջին օրը փողոցներում փողեր են ման ածում, իսկ բնակիչները երգում ու պարում են:

Եթովպիայում Նոր տարին տօնում են սեպտեմբերի կէսերին: Այն համընկնում է բերքի տօնին: Բնակիչները հաւաքում են քաղաքի կամ գիւղի ծայրին, իրենց հետ բերելով խորձ կապած չոր ճիւղեր, դարսում իրար վրայ ու վառում: Խարոյկի շուրջը կազմակերպում են հանդիսաւոր խաղեր ու պարեր:

Իտալացիները շատ հետաքրքիր սովորոյթ ունեն. Նոր տարւայ գիշերը նրանք իրենց բնակարաններից բակ կամ ուղղակի փողոց են շարտում տնային հնացած իրե-րը, ճեղքած ամանները, ջարդած կահոյքը: Ընդունած է, որ դա այդ ընտանիքին Նոր տարում յաջողութիւն կը բերի: Փոքրիկներին հեքիաթներ են պատմում կախարդ ԲեՖանի մասին, որը վառարանի ծխնետոյզով մտնում է տուն եւ երեխաներին կօշիկներ է նւիր բերում:

Գերմանացիների ու ւստրիացիների համար յաջողութեան խորհրդանիշը վաղուց ի վեր համարում են ծղխնետոյզ մաքրողն ու խոզը:

Պատմում են, որ հին ժամանակը եթէ Նոր տարւայ օրը փողոցում ծխնետոյզ մաքրող էր երեւում, բոլորը վազում էին նրա հետեւից, աշխատելով քսել նրան եւ մրտուել: Դա պէտք է իրենց երջանկութիւն բերէր: Նոր տարւայ սեղանի համար խոզ տապակելու սովորութիւնը մինչեւ հիմա էլ պահպանւել է:

Ռումանիայում Նոր տարւայ գալուստը նշում է ծիսական հինաւորք երգերով (կորեաղկաներով): Երգողները վերցնում են փայտերի կամ ճիւղերի վրայ ամրացած արհեստական ծաղիկների, օղաբլիթներ եւ բոժոժներ: Խիստ տարածւած է Նոր տարւայ տօնական Կապրա (այժ) արարողութիւնը: Այժի ծիսական պարը կատարում է այժի դիմակով եւ ուսերին խառտ վերմակ գցած մի մարդ: Կորեաղա երգողներին ուրախութեամբ ընդունում եւ հիւրասիրում են բոլոր տներում:

Յունաստանի որոշ գիւղերում յունարի 8-ին իշխանութիւնն անցնում է կանանց ձեռքը: Այդ օրը կանայք զբաղւում են այնպիսի գործերով, որոնցով սովորաբար տղամարդիկ են զբաղւում. հաս, ճագար ու գառ են մորթում, սրճարանում նստում են մի բաժակ գինու շուրջ: Ուժեղ սեռի ներկայացուցիչները յանձն են առնում խոհանոցային գործերը եւ երեխաների խնամքը՝ մխիթարելով իրենց այն բանով, որ կանանց երանաւետ վիճակը ընդամենը մի օր է տեսելու:

Տիւրքմէնիայում աղջիկները Նոր տարւայ գիշերը ուսերի վրայով կօշիկ են գցում, եթէ այն ընկնում է քիթը դէպի դուռը, այդ տարում ամուսնանալու են: Նոր տարւայ նւիրները դնում են սեղանի վրայ՝ շրջած արիւնների տակ:

Շուվարական գիւղերում Նոր տարւայ նախօրեակին երկար հնչում են դիմակաւորած երիտասարդների երգերը: Երիտասարդները մութն ընկնելու ժամանակ ծիծա-

ղաշարժ ներկայացումներ են տալիս այն տների առջեւ, որտեղ կան հարսնացու աղջիկներ, իսկ աղջիկները՝ փեսացու տղաների տների առջեւ: Նոր տարւայ սեղանին պէտք է լինի արանդական սխտորով մեղրը եւ խոճկոր, ըստ որում վերջինս պարտադիր չէ, որ տապակւած լինի, կարելի է նաեւ շոկոլադով: Այդ օրը սեղանին ոչ հաւ են դնում, ոչ բաղ, ոչ սագ, որպէսզի բախտը չթռչի տնից:

Շուվարականները Նոր տարւայ սեղանին դնում են չամիչով թխած բլիթներ: Այդպիսի բլիթներ տնտեսուհիները տարեկան թխում են միայն մի անգամ: Կէսգիշերին այդ երկրի նաւահանգիստներում կանգնած բոլոր նաւերը ընդհատուղ շչակներով ողջունում են Նոր տարւայ գալուստը:

Անգլիայում եւ Ռուսլոսում Նոր տարւայ տօնելը դարձել է երկրորդական, քանի որ ծննդեան տօները այն նսեմացրել են: Բայց դրա փոխարէն **Սկոտլանդիայում** Նոր տարին նշում են ուրախ եւ ճոխ: Բոլոր տանտիրուհիները թխում են Նոր տարւայ յատուկ սեւ բլիթներ, մէջը ընկոյզ եւ չամիչ դնելով: Յետոյ հարագատներով հաւաքում են ընտանիքի ամենատարիքաւոր անդամի տունը: Հէնց որ ժամացոյցը խփում է կէսգիշերւայ ժամը, տան դռները լայն բաց են անում, որպէսզի հին տարուն ճանփայ տան եւ Նոր տարուն ներս թողնեն: Յետոյ բոլորն իրար բռնած երգում են սկոտլանդական մի հանրայայտ երգ՝ «Մոռանա՛լ արդեօք հին սերը եւ չտխրել նրա համար» խօսքերով: Դրանից յետոյ նոր օրացոյցը հանդիսաւորութեամբ կախում են պատին: Այժմ ամբողջ ընտանիքը սկսում է նայել դռանը: Չէ՞ որ Նոր տարուն շատ կարեւոր է, թէ բաց դռ-ներով առաջինն ո՞վ կը մտնի: Հարկաւոր է, որ նա լինի թխահեր տղամարդ: Շատ վատ, եթէ նա խարտեաշ մա-գերով է կամ կին: Ի միջի այլոց, նրանց գալու վտանգը կանխած է սկոտլանդական տներում: Դեռես շատ վաղուց ամէն մի գիւղում ընտրում են մի թխահեր տղամարդ, որը Նոր տարւայ գիշերը հերթով շրջում է գիւղի բոլոր տները եւ բոլորին երջանկութիւն բերում: Սովորաբար նա իւրա-քանչիւր տանը թողնում է մի կտոր ածուխ, հետեւեալ ցանկութեամբ՝ «Ձող ձեր օջախում միշտ կրակ լինի»:

Սեբիկացիները շատ իւրօրինակ սովորութիւն ունեն: Այն սենեակում, ուր հաւաքում են հիւրերը, կախում են քաղցրուտենիքով լի մի մեծ աման, որն անուանում են Պի-նատ, զարդարած գազանների ու հրէշների նկարներով: Հիւրերի աչքերը հերթով կապում են, մահակը տալիս ձեռքը: Նա, ում յաջողւում է ջարդել ամանը, նոր տարւայ ընթացքում առանձնապէս երջանիկ կը լինի:

Բրազիլիայի քաղաքներում Նոր տարւայ առաջին օրը փողոցները տօնականօրէն են զարդարում: Վերջին ժամանակներս Ռիօ դէ Ժանէյրոյում սովորոյթ է դարձել Նոր տարին նշել ովկիանոսի արիւն: Փոքրիկ ծովածոցը, ուր գտնում է քաղաքը, յայտնաբերել է պորտուգալացի ծովայինների կողմից, չորս դար առաջ, Նոր տարւայ գիշերը: Ուստի, ուղիղ կէսգիշերին տասնեակ հազարաւոր մարդիկ սպիտակ զգեստներով զգում են դէպի ծով: Յետոյ սկսում է ջրի աստուածուհու երկրպագութեան ծիսակատարութիւնը: Վառուղ մոմերը ուղղակի դնում են առափնեայ արագի վրայ եւ տօնի մասնակիցներից շատերը մտնում են ջուրը ու ջրի վրայ ծաղիկներ ցանում: Ամբողջ արարողութիւնը տեսում է մի քանի ժամ: ■





Է՞՞՞ Կ՞՞՞ Ն՞՞՞ ՍԾ՞՞՞ Ս՞՞՞ ՍՅ՞՞՞

Հայաստանայց եկեղեցին եւ Աղանդատորական շարժումները խորագրի տակ սեմինար ԹՀՀԸՄ-ում.- Սոյն քականի դեկտ. 6-8-ը Թեհրանի Հայ Համալսարանականների Ընդհանուր Միութեան «Նիկոլ Աղբալեան» սրահում սեմինար տեղի ունեցաւ նիւրած Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հրը-



չակելու 1700-ամեակին: Դեկտեմբերի 6-ի ծրագրում՝ բացման խօսքից յետոյ որպէս բանախօս ելոյթ ունեցաւ Տէր Կոմիտաս քին. Դարախանեանը, որի բանախօսութեան նիւթն էր «Աղանդ եւ Աղանդատորական շարժումներ՝ պատմական ակնարկ»-ը:

Բանախօսը հակիրճ ներկայացրեց աղանդատորների պատմութիւնը եւ նրանց գլխատոր քարոզիչներին: Փաստօրէն նրա ելոյթը հող պարաստեց յաջորդ դասախօսի համար: Այդ օրուայ բանախօսութեան վերջում եղան հարցեր, որոնց պատասխանեց թեմիս բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տէր Մեայոս Եպիս. Սարգստեանը:

Դեկտեմբերի 7 եւ 8-ին որպէս դասախօս ելոյթ ունեցաւ Հայաստանից ժամանած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քրիստոնէական դաստիարակչութեան կենտրոնի գլխատոր խըմբագիր՝ Մերժ Մայիլեանը, որի դասախօսութեան նիւթներն էին «Ա-



ղանդատորական արդի շարժումները, գլխատոր աղանդներ» եւ «Գլխատոր աղանդները եւ եկեղեցու կեցածքը աղանդատորական շարժումների ու աղանդատորների դէմ»-ը: Ս.Մայիլեանը գիտականօրէն բացայայտեց աղանդատորական շար-

ժումների նպատակները եւ նրանց գործունէութեան ու քարոզչութեան հետեւանքով մեր ժողովրդի կրած վրնասները:

«Տէր կանգնեք մեր եկեղեցուն որը մեր հայրերի արիւնով է մեզ հասել»: Ձեռնարկը եզրափակեց թեմիս Առաջնորդը վերոյիշեալ նշանաբանով:

Լրագրութիւնը՝ Զեպիա Ամիրխանեանի

Ծրագիր՝ նիւրած իրանահայ վաստակատոր բեմադրիչ՝ Արամայիս Աղամալեանին.- Սոյն քականի դեկտ. 15-ին Հ.Մ.Ա.Կ.-ի Արեստից միութեան կողմից, նոյն միութեան «Կոմիտաս» սրահում յարգանքի եւ յիշատակի հանդիսութիւն էր կազմակերպուած՝ նիւրած իրանահայ վաստակատոր արեստագէտ, բեմադրիչ՝ Արամայիս Աղամալեանին: Ծրագիրը սկսեց Սամուէլ Խուրադադեանի ասմունքով: Այնուհետեւ ընթերցեց Հ.Մ.Ա.Կ.-ի կենտրոնական վարչութեան խօսքը:

Ծրագրի ընթացքում յորելեարի ներկայացումներից հատուծներ ցուցադրեց եւ նրա սաները յուշեր պատմեցին կապուած մեծ արեստագէտի հետ:



Գեղարեստական բաժնում նախ «Ակունք» պարախումբը, որի պարուսայց ղեկավարըն է Կ. Մանուչեանը, ելոյթ ունեցաւ եւ սպա Կ. Արգուեանի ղեկավարութեամբ

բեմադրեց Լ. Շանթի «Հին Աստուծներ»-ից մի հատուած: Ծրագիրն եզրափակեց թեմիս բարեխնամ Առաջնորդ՝ Տէր Մեայոս Եպիս. Սարգստեանի դրաստանքի խօսքերով:

Չութակի եւ դաշնամուրի կատարումներ Հայ Ակումբի սրահում.- Սոյն քականի դեկտեմբերի 7-8-ին, Թեհրանի Հայ Ակումբի սրահում տեղի ունեցաւ Չութակի եւ դաշնամուրի միասնական կատարումներ: Չութակահարն էր իրանահայ հանրածանօթ նագիշ Խաչիկ Բարայեանը, իսկ դաշնամուրով հանդէս եկաւ, Չարմիկ Աւագեանը:

Նագացանկում էր Մոցարտի, Բեթովենի, Շոբերտի եւ Շոքրատի ստեղծագործութիւնները:

Լրագրութիւնը՝ Թամիկ Քեշիշեանի

ԹՀ «Շանթ» դպրոցի շէնքի հիմնօրհնէրի արարողութիւն Մաջիդի քաղաքամասում.- Սոյն քականի դեկտ. 8-ին հովանաւորութեամբ թեմիս բարեխնամ Առաջնորդ Գերշնորհ Կ. Մեայոս Եպիս. Սարգստեանի կատարեց հայոց «Շանթ» տղայոց տարրական դպրոցի նոր շէնքի հիմնօրհնէրի արարողութիւնը: Արարողութեան ներկայ էին պետական ու ազգային պատասխանատուներ, քաղաքամասի հայ բնակիչներ եւ նոյն դպրոցի աշակերտները:



Է՞՞՞ Կ՞՞՞

Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը Իրանի խորհրդարանում (Ազգ օրաթերթ 30.11.00).- «Անատոլու» գործակալութիւնը վկայակոչելով իրանական մամուլը, գրում է, որ Իրանի խորհրդարանում Հիւսիսային Իրանի եւ Թեհրանի հայերի պատգամատոր Լեւոն Դարբեանը երկրորդ խորհրդարանին է ներկայացնելու մի օրինագիծ, որով «Ապրիլի 24-ը ճանաչուած է որպէս Հայոց ցեղասպանութեան օր»: Դարբեանը նշել է, որ «Իտալիայի եւ Ֆրանսիայի կողմից Հայոց ցեղասպանութեան պաշտօնական ճանաչումից յետոյ իրանահայերը ակնկալում են ԻԻՀ խորհրդարանի աջակցութիւնը եղեմի պաշտօնական ճանաչման հարցում»: Ըստ Դարբեանի, օրինագիծի հաստատման հաւանականութիւնը մեծ է: Յիշեցնենք, որ Իրանի խորհրդարանի 290 պատգամատորներից երկուսը հայ են:

Իրանը կը պայքարի կասպիականի նաւթի համար (Հայաստանի Հանրապետութիւն օրաթերթ 29.11.00).- Իրանական բանակի հրամանատար, զեներալ-մայոր Մահամադ Մալիմին յայտարարել է, որ իրանցի զինուորականները «պէտք է



պատրաստ լինեն կասեցնելու ՆԱՏՕ-ի եւ Իսրայելի մարտական խմբերի գործերը Կասպից Ծովում»։ Այդ մասին, ըստ «Նովաստի» ռուսական լրատուական գործակալութեան, հաղորդել է ԻՌՆԱ գործակալութիւնը։

Իր ելոյթում գեներալն ընդգծել է, որ «նատոյական եւ իսրայելցի զինուորականներն արդէն տարածաշրջանում են գտնուում նախ հետախուզողների անուն տակ»։ Նրա կարծիքով, նախքան ու գազի պաշարներով կասպիականը աշխարհում երրորդ տեղն է գրաւում Պարսից Ծոցից եւ Սիբերից յետոյ։ Նախքան հետախուզման, արդիւնահանման եւ փոխադրման սկիզբը, իր կարծիքն է յայտնել իրանցի գեներալը, միանգամայն հաւանական է, որ ընթացիկ Արեւմտաքի սցենարով, ինչպէս դա տեղի ունեցաւ Պարսից Ծոցի տարածաշրջանում։ «Իրանն ուժեղ բանակ ունի եւ արտաքին ուժերին թոյլ չի տայ ռազմական ներկայութիւն հաստատել Կասպիականում», - ասել է Մալիմին։ Իսկ մերձկասպեան պետութիւնների բանակների աջակցութեամբ կը վերացի ցանկացած ռազմական սպառնալիքը, անելացրել է նա։

Ահմադ Մասջեդ Չամէին ԻԻՀ Մշակոյթի ու Առաջնորդութեան նախարարութեան պաշտօնակատար (ԻՌՆԱ). - Սոյն քուկանի դեկտ. 14-ին ԻԻՀ նախագահ Խաթամին ընդունելով «Մշակութային ու Առաջնորդութեան» նախկին նախարար դոկտ. Մոհաջերանիի հրաժարականը, յիշեալ պաշտօնը յանձնեց Մասջեդ Չամէինին։



նեց Մասջեդ Չամէինին։

Մասջեդ Չամէին մինչ այժմ նոյն նախարարութեան օգնականի պաշտօնն էր վարում։ Նախկին նախարար Մոհաջերանիին, նախագահ Խաթամիի կողմից



նշանակեց որպէս նախագահի խորհրդատու եւ «Քաղաքակրթութիւնների երկխօսութեան» կենտրոնի պատասխանատու։

ԾՅ Թ Է՞ Ի Զ Կ

Թաւրիզի նահանգապետարանի պատմիրակութիւնը՝ Միւնիքում (ՀՀ օրաթերթ 23.11.00). - Աշխատանքային այցով Միւնիքում էր գտնուում Իրանի Իսլամական Հանրապետութեան Թաւրիզի նահանգապետարանի պատմիրակութիւնը՝ նահանգապետի առաջին տեղակալ Նաջաֆ Ազարիի զլխաւորութեամբ։ Պատմիրակութեան կազմում էին նաեւ Թաւրիզի գործարար շրջանների ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Հայաստանում ԻԻՀ-ի դեսպանատան աշխատակիցներ։

Միւնիքի մարզպետ Էդիկ Բարսեղեանի հրաւիրած հանդիպմանը, որին մասնակցում էին սիւնեցի մի խումբ գործարարներ, քննարկեցին երկկողմ յարաբերութիւնների զարգացման հետ կապւած հարցեր։ Խօսք եղաւ Միւնիքի տարածքում նոր աշխատատեղերի ստեղծման, քարի, փայտի մշակման, տեքստիլ արդիւնաբերութեան, զբօսաշրջիկութեան եւ առեւտրի զարգացման ուղղութեամբ կատարելիք քայլերի մասին։ Իրանական պատմիրակութեանը հետաքրքրում էին Հայաստանի միջոցով ռուսական շուկայ դուրս գալու հնարաւորութիւններն ու հեռանկարները։

Գարեգին Բ Կաթողիկոս. «Հաւատքով է կանգուն Միսիթարեան Միարանութիւնը» (Մայր աթոռ Սբ. Էջմիածնի մամլոյ դիւան - Ազգ օրաթերթ 23.11.00). - Նոյնքերի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը ներկայ գտնուեց ՀՀ Գիտութիւնների ազգային ակադեմիայում կազմակերպւած Միսիթարեան միարանութեան 300- ամեայ յորելեանին նիւրում «Միսիթարեանների դերը հայ հոգեւոր-մշակութային վերածննդի գործում» զիտածողովի բացմանը։

«Արդարեւ, հաւատքով կանգուն է Միսիթարեան միարանութիւնը։ Իր մեծագործ հիմնադրի՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցու Վարդապետ Միսիթար Սեբաստացու

հաւատն ու նիւրումը Ս. Ղազարում 300-ամեայ ստեղծարար կեանք դարձաւ՝ պատկերով հայ մշակոյթի աստղազարդ երկնակամարը պայծառաշուք համատեղութեամբ», իր գնահատանքը տալով միարանութեան գործունէութեանը՝ ասաց Վեհափառ Հայրապետը, նշելով Միսիթարեանների վաստակը հայագիտութեան բնագաւառում, նրա դերը հայ տպագրութեան ու թարգմանական գրականութեան զարգացման գործում։



Նորին Սրբութիւնը գնահատանքով նշեց, որ Միսիթարեանները մեծապէս արժեւորել են Հայ Առաքելական եկեղեցու դերակատարութիւնը։

Գիտածողովին ուղերձ էր յղել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանը։ Բացման խօսքով հանդէս եկան ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆառէյ Մարգարեանը եւ Միսիթարեան միարանութեան ընդհանուր աքբահայր Հ. Եղիա Ծ. վրդ. Քիլաղպեանը։

Արաքս գետի սահմանամերձ հայ-իրանական շուկան մօտ ժամանակներս կը վերաբացի (Ազգ օրաթերթ 24.11.00). - Հայաստանում Իրանի դեսպանատան տնտեսական պատասխանատու Ս. Թարաթարային երկէ մամլոյ ասուլիսում նշեց, որ Արաքս գետի սահմանամերձ հայ-իրանական շուկան մօտ ժամանակներս կը վերաբացի։

Պրն. Թարաթարային տեղեկացրեց նաեւ, որ եկող շաբաթ Հայաստան կը ժամանի իրանական կառավարական պատմիրակութիւնը՝ Հայաստանի պաշտօնեաների հետ քննարկելու Իրան-Հայաստան գազամուղի շինարարութեան մանրամասները։ Ամենայն հաւանականութեամբ, արդէն 2001 թ. յունարից կը սկսեն գազամուղի շինարարական աշխատանքները։ Ըստ նախնական հաշարկների, մէկ տարին բաւարար կը լինի կառուցելու 120 կմ երկարութեամբ գազատարը։ «ՀՀ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի վերջերս Իրան կատարած



այցը եւ ամենաբարձր մակարդակով բանակցութիւնները յուսադրում են, որ խողովակաշարի կառուցումը կը սկսի եւ կ'արտոյի նախատեսած ժամանակահատուածում: Իրանի նախագահ Խաթամին անձամբ հետեւում է Իրան-Հայաստան գազատարի կառուցման խնդիրներին», նշեց դեսպանատան տնտեսական պատասխանատուն:

ՕՒԷԶ²1/4Մ²ՍՒԷՍ

Թուրք պրոՖետորը պահանջում է ասել որը ճշմարտութիւնը (Ազգ օրաթերք 23.11.00) Փարիզ, 22 նոյեմբեր, Նոյեան տասպան.- Ֆրանսիական «Էքսպրես» շաբաթաթերթին Ստամբուլի Սաբանջի համալսարանի պրոֆետոր, պատմաբան Հային Դեքթայը Հայոց ցեղասպանութեան շուրջ տուած հարցազրոյցում առանց ցեղասպանութիւն բառը գործածելու ասել է,- «Այլեւս պէտք է լեզուները բացեն եւ 1915 թ. պատահարների մասին ճշմարտութիւնն ասի: Տասնամեակներ ի վեր քննեցում են Թուրքիայի հասարակական կարծիքը, կրկնելով միշտ նոյն հանգերգը, նոյն օրօրները, մինչդեռ տոնամերթով փաստաթղթեր կան, դիւանագէտների, դեսպանների, կրօնաւորների վկայութիւններ, որոնք փաստում են տխուր իրականութիւնը: Արխիւներում կան բազմաթիւ լուսանկարներ, որոնց ի տես ես լաց եմ եղել: Թուրքիայում ամբողջ սերունդներ անտեղեակ են այս ամենից: Այս ամէնը պէտք է վերջանայ եւ տեսնենք, ընդունենք իրականութիւնը»: Այս Բեքթայը խօսեց երիտթուրքերի կազմակերպած ջարդարար յատուկ ջոկատների մասին, որոնք, ըստ հեղինակի, 10 ամսում ջարդել են 600 հազար հայեր: Բեքթայը նաեւ համոզուցք է արտայայտում, որ Թուրքիայում անպայման պէտք է ընդունի ճշմարտութիւնը եւ ամէն ոք իմանայ եղելութիւնը:

Յայտնելով այս մասին, «Ամերիկայի ձայն» ռադիօկայանը տեղեկացնում է, որ Հայի Բեքթայը համանման արտայայտութիւններ է արել նաեւ հոկտեմբերին թուրքական մամուլում, որի համար քննադատուել է եւ որակել որպէս ազգադաւ: Նոյեմբերի 10-ին «Միլիթ» թերթի

խմբագրին նա ասել է. «Եւրոպայում եւ ԱՄՆ-ում քիչ թէ շատ զարգացած որեւէ մէկին չէք կարող համոզել, որ 1915-ին սարսափելի դէպք չի պատահել:

Ռուսաստանը մատնների լծի տակ (Ազգ օրաթերք 29.11.00).- Վերջերս ռուսական եկեղեցու հովանաւորութեամբ լոյս է տեսել Օ. Պլատոնովի «Ռուսաստանը մատնների իշխանութեան տակ» գիրքը, որի էջերում պատմում են հրեայ մատնների՝ Ռուսաստանում արմատաւորելու, «հինգերորդ շարասեան» ձեւաւորման, 1917 թ. հոկտեմբերեան յեղափոխութեան մէջ նրանց դերի, CIA-ի հետ սերտ համագործակցութեան, Ֆինանսատնտեսական ոլորտում նրանց առաջատարութեան, Ռուսաստանը ԽՍՀՄ օրինակով մասնատելու ծրագրերի մասին: Աշխատութեան վերջում, ըստ այբբենական կարգի, բերում են Ռուսաստանում յայտնի քաղաքական, տնտեսական, մշակութային գործիչների, խմբիչխանների, լրագրողների անունները, ովքեր մաս են կազմում մատնական տարբեր խմբերի, համագործակցում են CIA-ի խորաշխարհային գաղտնի «Մոսադ» ծառայութեան հետ:

Հայ հասարակութեանը ծանօթ դէմքերի շարքում գրքում կարելի է գտնել Միխայիլ Գորբաչովի, Բորիս Ելցինի, Բորիս Բերեզովսկու, Վլադիմիր Գուսինսկու, Ռոման Աբրամովիչի, Նիկոլայ Աքսիօնենկոյի, Էդուարդ Շեւարդնաձէի, Գալինա Ստարոտյոտովայի, Պաւել Բորոտինի, Ալեքսանդր Վոլոշինի, Ալեքսանդր Լեբեդի, Ռուսլան Աուշեւի, Ասլան Մասխադովի, Սինտիմիր Շայմիւելի, Ալլա Պուգաչովայի, Գրիգոր Եսկիւնսկու, Եզր Գալդարի, Իրի Լուժկովի, Եւգենի Պրիմակովի անունները:

Վեճեր այլեւս չեն լինի (Հայկական ժամանակ օրաթերք 18.11.00).- Հասցէների համար պայքարը ինտերնետային համակարգում այլեւս նախկինի նման լարուած չի լինի: ICANN (Internet Corporation for

Assigned Names and Numbers) կազմակերպութիւնը, որը զբաղւում է ինտեր-նետում հասցէների տրամադրմամբ, որոշում է կայացրել թոյլատրել եօթ նոր գերաւայթերի գոյութիւնը:

Ներկայումս բազմաթիւ ընկերութիւններ, որոնք ցանկանում են ստանալ COM վերջաւորութեամբ հասցէներ, յայտնաբերում են, որ գրեթէ բոլոր տարբերակներն արդէն ստեղծուած են եւ շատ յաճախ վաճառում են բարձր գներով: Այժմ հասցէները կարող են վերջանալ այսպէս՝ biz, pro, name, info, museum, aero, coop եւ: Ընկերութիւնը որոշել է առայժմ ձեռնպահ մնալ beo, web եւ kids վերջաւորութեամբ հասցէների տրամադրումից: ICANN-ը եկել է այն եզրահանգման, որ kids վերջաւորութեամբ սայթերը, որոնք նախատեսուած են երեխաների համար, կարող են վրտանգ ներկայացնել հէնց երեխաների համար, քանի որ կարող են օգտագործել չարագործների կողմից: Ներկայումս ինտերնետում գոյութիւն ունեն մի քանի լայն տարածում ունեցող վերջաւորութիւններով հասցէներ՝ com, net, եւ org: Բացի այդ, իրաքաչիւր երկիր սայթերի համար ունի իրեն յատուկ վերջաւորութիւնը: Այժմ տեսակէտ կայ, որ հասցէները կը սկսեն ձեռք բերել սպեկուլեանտները, որպէսզի հետագայում վաճառեն անիլ թանկ գնով:

Կուրսկի կործանման պատճառ է դարձել «օտարերկրեայ սուզանաւի խոյահարումը» (Հայաստանի Հանրապետութիւն օրաթերք 29.11.00).- «Կուրսկի կործանման պատճառ է դարձել «օտարերկրեայ սուզանաւի խոյահարումը»: Դա կարող էին լինել ամերիկեան «Տոլեդօ» ատոմային սուզանաւը կամ անգլիական «Մովերլեն» տիպի ատոմային սուզանաւը: Նրանք օգոստոսին գործել են Հիւսիսային նաւատորմի զօրավարժութիւնների շրջանում եւ այժմ դուրս են բերուած իրենց ռազմածովային ուժերի մարտական կազմից: Այս կարծիքն է յայտնել Ռուսաստանի ռազմածովային ուժերի գլխաւոր հրամանատար, նաւատորմի ծովակալ Վլադիմիր Կուրոյետովը «Մոսկուայա գազետա» շաբաթաթերթում հրապարակուած հարցազրոյցում:





Գլխատր հրամանատարը նշել է, որ «աղետի շրջանում յատակին բացայայտել են երկու մետաղական անունալիաներ: Մեկը, ինչպես առեւի ուշ պարզել է, «Կուրսկն» էր, երկրորդը, Վ. Կուրոյեդովի խօսքերով, «որոշ ժամանակ անց անհետացել է»:

Բրազիլիայի նախագահն ունի հայազգի խորհրդական (Ազգ օրաթերթ 09.12.00). - Մտն 40 հազարանոց բրազիլահայ համայնքը խիստ ներկայացուցչական է: Արտգործնախարարության համակարգում աշխատում են հայազգի 23 դիւանագետ, այդ թում 2 դեսպան, նախագահի տնտեսական հարցերով խորհրդական, դաշնային, նահանգային եւ քաղաքային խորհրդարանի անդամներ, քաղաքապետներ, տնտեսագետներ, իրաւաբաններ, մշակութային եւ ռազմական գործիչներ: Ինչպէս Արմենպրեսի թղթակցի հետ գրոյցում նշեց Բրազիլիայում Հայաստանի գլխատր հիւպատոս Աշոտ Եղիազարեանը, բարուք է նաեւ համայնքի սոցիալական վիճակը. կան մեծահարուստներ, հարուստներ, արդիւնաբերողներ եւ առեւտրականներ: Երանցից մի քանիսը որոշ աջակցութիւն են ցուցաբերում Բրազիլիայում Հայաստանի գլխատր հիւպատոսութեանը:

Թուրքական իշխանութիւնները ձեռքակալել են ասորի եկեղեցականի (Ազգ օրաթերթ 09.12.00). - 1915 թ. հայերի, ասորիների ու յոյների ցեղասպանութիւնը ճանաչելու եւ այդ մասին յայտարարութիւն ա-նելու համար թուրքական իշխանութիւնները վերջերս ձեռքակալել են հայր Իսուֆ Աքբուլութին, որն ասորի եկեղեցական է եւ Թուրքիայում դեռ-ես ապրող ասորի փոքրիկ համայն-քի կրօնական ներկայացուցիչներից մեկը: Թուրքական թերթերից մեկը, ինչպէս տեղեկացնում է Մ. Նահանգ-ներում գործող ասորական համայն-քի գրասենեակը, հոկտեմբեր ամսին հարցազրոյց էր անցկացրել հայր Իսուֆին հետ, որ հաստատել էր 1915 թ. հայերի, ասորիների եւ յոյների դէմ կատարած ցեղասպանութեան փաստը: Գրասենեակը տեղեկացնում է, որ ասորի եկեղեցականի դէմ ազգա-յին դաւաճանութեան մեղադրանքով դատը նշանակւած է դեկտեմբերի 21-ին: *Դատապարտելու դէպքում նրան սպասում է մահապատիժ:*

Մ. Նահանգների ասորիները, ինչ-պէս տեղեկացնում է յիշյալ գրասեն-եակից ստացւած էլեկտրոնային նա-մակը, բողոքի նամակներ են յղել Կոնգրեսի ասորին եւ վերին պա-լատների անդամներին:

Համանախագահները կայցելեն Ղարաբաղ (Ազգ օրաթերթ 06.12.00). - Դեկտեմբերի 10-ին սպասում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Նիկոլայ Գրիբկովի (Ռու-սաստան), Քերի Քաւանոյի (ԱՄՆ) եւ Ժան Ժակ Գալարդի (Ֆրանսիա) այցը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն: Ինչպէս հաղորդեցին ԼԴՀ Արտգործնախարարութեան մամուլ ծառայութիւնից, նախատեսւում են միջազգային միջնորդների հանդիպումներ ԼԴՀ նախագահ Արկադի Դուկասեանի եւ արտգործնախարար Նայիրա Մելքումեանի հետ: Ինչպէս արդէն հաղորդել է, միջնորդները կայցելեն նաեւ Երեւան ու Բաքու:

Հայերին եւ աղբրեջանցիներին բռնատարներով տանում են Հոլանդիա (Ազգ օրաթերթ 06.12.00). - Հոլանդական մամուլը գրում է, որ հանցագործ կազմակերպութիւններն ապօրինաբար Նիդեռլանդներ են փոխադրում օտարերկրացիներին, մասնաւորապէս Հայաստանից եւ Աղբրեջանից: Մարդիկ բերում են փակ բռնատարներով, յատուկ մըշակւած երթուղիներով եւ ընդհանրապէս այդ գործը շատ խնամքով է կազմակերպւած: ■

Շաղորդագրութիւն

Թեհարանի հայոց թեմի 12-րդ շրջանի Պատգամատրական Ժողովի երկրորդ նիստը գումարեց երեք-շաբթի, դեկտեմբերի 5-ին, երեկոյեան ժամը 6-ին, Ազգային Առաջնորդարանում 48 պատգամատրների ներկայութեամբ եւ թեմիս քարեխմամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մեպուհ եպիսկ. Մարգարեանի նախագահութեամբ: Ժողովի բացումը կատարեց Սրբազան Հօր Տէրմուկան աղօթքով:

Նախ՝ համաձայն պատգամատրների հետ նախօրօք համադրւած օրակարգի՝ ընթերցեց ու հաստատեց նախորդ նիստի արձանագրութիւնը, ապա իր ընդհանրութեան մէջ քննարկեց թեմիս կանոնադրութեան պարսկերէն օրինակը, եղան առաջարկներ եւ դիւանի կողմից լուսարանութիւններ, որից յետոյ պատգամատրները ստորագրեցին յիշեալ կանոնադրութեան մասին կազմւած պետական պատկան մարմնին յղելիք արձանագրութիւնը: Երջանատր Թեմական Խորհրդի կողմից 12-րդ շրջանի Պատգամատրական Ժողովին ներկայացեց նոյն կազմի վերջին եռամսեայ գործունէութեան տեղեկագիրը:

Ժողովը անդրադարձաւ ժողովապարական կանոնակարգ մշակելու անհրաժեշտութեան: Դիւանի կողմից այս ուղղութեամբ տրեց բացատրութիւններ եւ ժողովը որոշեց ժողովապարական կանոնակարգ կազմելու համար կեանքի կոչել համապատասխան յանձնախումբ: Մտացւած գրութիւնների եւ եղած հարցումների մասին դիւանը բացատրութիւններ տուց եւ ապա ընդունեցին որոշումներ: Այնուհետեւ ժողովն անցաւ Թեմական Խորհրդի ընտրութեան օրակարգին: Ժողովը քննելի հաշարկման համար ընտրեց 3 հոգիանոց քւէախոյզ յանձնախումբ՝ կազմւած հետեւեալ պատգամատրներից. Դոկտ. Լիդա Միրզա Ազոյեան, դոկտ. Ալֆրեդ Անթրոնտեան, պրն. Երւանդ Չամանի:

Ապա 18 պատգամատրների ստորագրութեամբ ներկայացեց 11 թեկնածուների մի ցանկ, մի շաբթ պատգամատրների կողմից ներկայացուցին այլ թեկնածուների անուններ, որից յետոյ քւէարկութեամբ ընտրեց Թեհրանի հայոց Թեմական Խորհուրդը՝ հետեւեալ անձնակազմով.

- 1- Դոկտ. Ռազմիկ Յովհաննիսեան 47 քւէ
- 2- Դոկտ. Արդա Յովհաննիսեան 45 քւէ
- 3- Պրն. Թաթուլ Եղաբեան 40 քւէ
- 4- Տկն. Արմենուշ Առաքելեան 39 քւէ
- 5- Պրն. Յարութիւն Քեչիշեան 39 քւէ
- 6- Պրն. Եսայի Աբրահամեան 38 քւէ
- 7- Պրն. Վահիկ Շահնազարեան 38 քւէ
- 8- Պրն. Վարուժ Յովհաննիսեան 38 քւէ

Շաբ. էջ 10-ում



Գովազդ



Շնորհաւոր ՆՈՐ ՏԱՐԻ

Մաղթենք, աշխարհին խաղաղութիւն, հայրենիքին բարգաւաճում, ժողովրդի փափագների իրականացում

تعمیر گاه آندرانیک

تعمیرات اتومبیلهای با سیستم کامپیوتری مدل بالا
جیبهای کمکدار و پاترول سرویس و تعمیر انواع
گیربکسهای اتوماتیک و خدمات الکتریکی
تویوتا-گالانت-میتسویشی - gm- پراید- BMW

انتهای پاسداران، پشت کاخ نیاوران، خیابان
دارآباد، اول دارآباد تلفن: ۲۲۹۳۲۶۷

Շնորհաւորում ենք համայն հայոց

ՆՈՐ ՏԱՐԻՆ

صنایع لاستیک آموست

Ազարեաս
اڟاریان

() :

تلفن: 7349930 فاكس: 7332667 همراه: 09112040741

Շնորհաւոր Նոր Տարի

ماشین سازی سینگر

(باری جانیان)

جاده آبعلی خیابان سازمان آب، نرسیده به پنجم شیدایی
پلاک ۳۴ صندوق پستی ۱۵۴-۱۶۵۹۵
تلفن ۷۳۴۹۵۱۶ تلفکس ۷۳۳۹۷۱۹

Շնորհաւոր ՆՈՐ ՏԱՐԻ

Թող որ 2001 թւականը լինի համայն հայութեան իղձերի իրականացման տարի

سوپاپ تراشي ميليون

Արիս
آریس

-

تلفن : ۷۸۱۱۰۳۷

ՏխրուՆի

Լոյս երկշաբաթաթերթը իր վշտակցութիւնն է յայտնում ներքոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատներին և բոլոր սգակիրներին:

- ▲ Նորամայր Դիլանեան (Յակոբեան)
- ▲ Մանաւազ Խողաբախչեան
- ▲ Վահան (Յովհաննէս) Տէր Մամբրեյեան
- ▲ Վարդան Օրուջեան
- ▲ Վարդեր Կիրակոսեան (Նազարեան)
- ▲ Շերամ Մուրադեան
- ▲ Լուսիկ Էլիասեան (Պետրոսեան)
- ▲ Արմենուհի Երիցեան (Ժամագործեան)
- ▲ Հոգապետ Առաքելեան (Գաբրիէլեան)
- ▲ Արաքս Սինասեան (Ազիզեան)
- ▲ Դանիէլ Ղազարեան
- ▲ Յարութիւն Արղալեան
- ▲ Ստեփան Տէր Պողոսեան
- ▲ Վարդան Մատթէոսեան

Համար 11 խաչբառի լուծած տարբերակը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	ճ	ա	ճ	ի	կ	ո	ն	ե	ա	ն		ա	բ	ու	
2	հ	ա	ս	տ	ա	տ	ե	լ		ա	կ	ն	ա	ր	կ
3	ե		ա		ր		խ	ի	տ		լ	ա	ւ	ա	ն
4	ր		վ	ա	ս	պ	ու	ր	ա	կ	ա	ն		ն	ու
5	ճ		ա	Ֆ			ա	ճ		զ	ա	ն	ա	զ	ա
6	կ	ո	ճ	ղ		ը		ո		տ	ե	ս	ի	լ	ք
7	ր		ա	ա		կ	ա	ղ		ա	լ		լ		
8	տ		ը	ն	զ	ե	ղ	ք	ի	ր		բ		զ	է
9	չ	է			ա	լ		ա	ր	ե	ա	ն		ն	
10	ե		ա	ճ	ն		ա	խ	ա	լ	ք	ա	լ	ա	ք
11	ա	ղ	ն	ա	զ	ու		ո	յ		լ	լ	ա	ց	ք
12	ն		ա	ր	ա		ա	հ	ա		ո			ք	
13		ա	ս	ա	տ	ու	ր		տ	ա	ր	ա	փ		բ
14		պ	ու	տ		ա	ն	ու	ս		պ	ո		ա	
15	ս	ի	ն		ճ	ա	տ	ա	կ	ա	ր	ա	ր	ե	լ



Հասարակական

Հայաստանի Հանրապետության Ազգային Էեռուստատեսություն

Յուսանք եւ սպասենք...

Կոլիա Տեր Յովհաննիսեան

Նորագոյն հաղորդակցական միջոցների տարերային զարգացման ու տարածման հետեւանքով, զգալի փոփոխութիւններ են նկատուում նաեւ ժողովուրդների հասարակական կեանքի բնորոշ բնութագծերի մէջ: Միոններով հեռու տարբեր ազգերն ասես մերձանում են, շփում իրար հետ սիրում են ընդօրինակել միմեանց բարքերն ու սովորութիւնները: Բաժանումները նախկինի պէս, երբ շարքներով ու ամիսներով մարդիկ անտեղեակ էին մնում իրար մասին, այնքան էլ ստակալի չեն: Նազում են գործարարական ճամբորդութիւններն ու հանդիպումները. հնարաւոր է նոյնիսկ կազմակերպել միջ- քաղաքային, նոյնիսկ միջ- երկրային ժողովներ: Չի բացառուում, որ շուտով մարդիկ իրար կը դիտեն ու կժպտան հեռախօսային կապերի ժամանակ: Մարդը, որ ի բնէ համարում է հասարակական արարած, դառնում է աւելի ինքնակենտրոն, կըղ- զիացած ու անհաղորդակից իր շրջապատին: Խախտում են ցեղային ու ազգայնական մտ- տիւնները, մեղութեան մէջ, ան- հատը աւելի շատ կարօտում է համակարգչին կամ հեռուստա- տեսին, քան... մարդկանց, ո- բունք աստիճանաբար դառնում են ոչ ցանկալի...

Այսպիսով, օր աւուր աճում է հաղորդակցական ու զանգ- ւածային լրատուական միջոց- ների մասնաւորաբար հեռուս- տատեսի ունեցած մասսայա- կան ազդեցութիւնը ժողովուրդների առօրեայ կեանքի մէջ: Այս կախարդական արկղն ողջ հմայքով ու անհամար գրաւչութիւններով մէկտեղ, իր վիթխարի դերակատարու- թիւնն ունի իւրաքանչիւր երկրի հասարակական, մշա- կոյթային, տնտեսական, քաղաքական ու ռազմավարա- կան դաշտերում: Ընդ որում, վերջին տարիներին ար- հեստական արբանեակները պարզապէս վերացնելով եր- կրների փոխարարներութիւնների մէջ առկայ քաղաքա- կան ու սահմանային կաշկանդումներն ու արգելքները՝ տարբեր երկրների հեռուստատեսային հարիւրաւոր ծրա- գրները ուղղակիօրէն մատուցում են ամենուրեք՝ ընդհուպ բնակարաններից ներս: Որով հեռուստատեսը պետու- թիւնների համար դարձել է ոչ միայն ժողովուրդների կա- ռավարման ու իշխող ուժերի գաղափարական քարոզչու- թեան գլխաւոր լծակ՝ այլ նաեւ... գլխացաւանք:

Այս նախաբանից յետոյ նշենք, որ Սփիւքի հայու- թեան համար իրօք բաղձալի յայտնութիւն եղաւ Հայաս- տանի Հանրապետութեան Ազգային Հեռուստատեսու- թեան ծրագրերի սփռումը բովանդակ աշխարհում: Եթէ անցնելուս «խաբրիկ մը լուր» ունենալու հայրենասիրա- կան մղումով սփիւքահայութիւնը ստիպած էր հայցել կռուակի միջամտութիւնը, այժմ հանգիստ նստած իր տան

մէջ մատի թեթեւ հայումով անմիջականօրէն հաղորդակից է դառնում Մայր Հայրենիքի անց ու դարձին, հասարա- կական ու մշակութային կեանքին: Այլեւս Հայաստանը սոսկ պատկերացում չէ, աչքի առաջ է՝ մասամբ թափան- ցիկ, իր հոգսերով ու ցաւերով, լացքի փոշիների, խմիչքի, ծխախոտի եւ այլ գովազդներով, իր բազմաթիւ հրապոյր- ներով, սիրելի, թանկագին, եւ... այնքան էլ վարդագոյն չէ, ինչպէս միշտ թուացել է...

Եւ այնտեղ, ուր ՀՀ-ի պետական այրերը լայն հնարա- տրութիւններ ունեն առաւելագոյն օգուտները քաղել հա- ղորդակցական այս իրապէս զանգաւածային միջոցից, որի համար անշուշտ վճարում է բարձր գին, երբեմն նկատ- ւում են որոշ երեւոյթներ, որոնք ինչ որ նսեմացնում են թափուած ջանքերը, նիւթական ներդրումները, այս զանգ- ւածային միջոցի այսպէս ասած բուն առաքելութիւնը:

Տեսալ դէպքում խօսքը չի գնում հեռուստատեսային թողարկումների ինչպիսին լինելու մասին. Այս թեմայով կարելի է բազմաթիւ էջեր լցնել: Առանց դէս ու դէն ընկ- նելու ասենք, որ խօսքը առաւելապէս վերաբերում է ռու- սերէն լեզվին, որը միջին հաշիւով օրական երկու ժամով փառաւո- րապէս զբաղեցնում է Հայաս- տանի Հանրապետութեան Ազ- գային Հեռուստատեսութեան ոչ այնքան երկարատեւ արբան- եակային հաղորդածամը...

Եթէ նկատի ունենանք այն հանգամանքը, որ հեռուստա- տեսը ըստ ամենայնի լուրագոյն չափանիշն է որեւէ երկրի մշա- կութային զարգացման մակար- դակի արժեւորման խնդրում, ապա պէտք է ցատկ նշել, որ

ռուսերէն լեզվի առկայութեամբ ՀՀ-ի Ազգային հեռուս- տատեսը կորցնում է իր ազգային ու մշակութային ուրոյն դիմագիծը, որն առանց այն էլ որոշ չափով աղճատում է արեւմտեան ժամանակակից արեստից կատարած կապ- կային ընդօրինակումներից:

Անժխտելի է, որ Ռուսաստանն ու ռուս ժողովուրդը դարեր շարունակ եղել են ու մնում են հայ ժողովրդի ամենայնուայի բարեկամները: Սակայն ռուսերէն լեզվի ոչ շատ ցանկալի առկայութեան շարժառիթը հաւանաբար պէտք է որոնել ոչ թէ երկու երկրների սերտ յարաբերու- թիւնների՝ այլ առնուազը նիւթական դժարութիւնների ո- լորտում: Առկայ են նաեւ մարդուժի, պարզապէս ժամա- նակային ծրագրատրումների վարչական, տեխնոլոգիա- կան ու այլ պակասներ: Այնուամենայնիւ, նկատի ունե- նալով խնդրի այսպէս ասած համաշխարհային կարեւո- րութիւնը, թում է ընդունելի չէ որեւէ արդարացում: Ասենք, թէ Հայաստանի բնիկ ժողովուրդը օժտւած է ռուսերէն լեզվի իմացականութեամբ ու կարողանում է օգուտել ռու- սերէնով հրամցած հաղորդումներից: Ասենք, թէ վերջին տարիներում Հայաստանից արտագաղթած հայերը նոյն- պէս ծանօթ են ռուսերէն լեզվին: Այդ դէպքում ո՞վ է մտա- ծում սփիւքահայութեան մասին, չէ ո՞ր ՀՀ-ի Ազգային





Հասարակական



Հեռուստատեսության ամենահաւատարիմ հեռուստա-
դիտողները նրանք են ու քանակային առումով չեն զիջում
բնիկ հայութեանը: Հայաստանից արտագաղթած հայերը
հաւանաբար կարող են ռուսերէնի թարգմանած շարժա-
նկարներն ու հեռուստատեսային սերիաներին հետեւել
բնագրային լեզուով. ո՞վ ջիղ ունի, մասնաւորաբար նոր
սերունդը, ժամերով ունկնդրելու կինոժապաւեճի վրայ
ձայնագրած թարգմանող տղամարդու միայլար ու ձանձ-
րալի ձայնը, երբ հնարաւոր է Ֆիլմը դիտել ու ըմբռ-
խընել իր օրիգինալ տարբերակով, որի մէջ ձայնային
արեստն իր զգացմունքային թրթռումներով, ելեւջներով ու
ազդեցութեամբ ինքնըստիներեան կազմում է հրամցող
ամբողջի կարեւորագոյն մասը: Հարց է առաջանում, թէ էլ
ո՞ւմ է պէտք արբանեակային սփռումը, միթէ՞ հնարաւոր
չէ նման ծրագրերը մատուցել տեղական կայաններով,
արդեօ՞ք դա ինչ որ անտեսում կամ ակամայ ծամա-
ծռութիւն չէ ուղղւած հայկականութեանն ու հայերէնին
ծարաւ սփիւռքահայութեանը: Երբեւէ խորհել է՞ք հարկը
հազարաւոր սփիւռքահայերի մասին, որ երբ սկսում է
ռուսերէն թարգմանած հերթական կինոնկարը, ինչպիսի
հիասթափութեամբ ու ցաւով են բաժանում սիրելի Հ1-ից:

Ի հարկէ, սփիւռքահայութեանը «մարդու տեղ չունի»
հարցը նորութիւն չէ, դա ցայտուն կերպով արտացոլւած է
նաեւ թէ՛ խորհրդային շրջանի եւ թէ՛ ներկայի պարբերա-
կան ու հրատարակչական մամուլի մէջ, ուր երբեք չեն
տրուում ռուսերէնով գրած բառերի, մախադասութիւնների
կամ նոյնիսկ չափածոյ հատածների թարգմանութիւնը
ծանօթութիւնների բաժնում: Ասել է, հայ մամուլն ու գրա-
կանութիւնը մենաշնորհն է միայն ու միայն բնիկ հայաս-
տանցիների, որոնք գիտեն ռուսերէն, եւ աշխարհում հա-
յաստանցուց բացի էլ ուրիշ հայ չկայ... Կան թերեւս
միայն «ա» յօդակապով հայեր...

Թումն է Հայաստանի անկախացումից յետոյ՝ Հայրե-
նիք- Սփիւռք շփումների ու տարբեր բնագաւառներում
ստեղծւած կապերի ընդլայնմամբ, անհրաժեշտ է առաւել
ուշադրութիւն ու նրբանկատութիւն ցուցաբերել վերոնըշ-
ւած խնդիրների նկատմամբ: Էլ ի՞նչ անկախութիւն, երբ
Ազգային Հեռուստատեսութիւնը երկար տարիներից յե-
տոյ դեռեւս կախում ունի ռուսերէնի թարգմանած թողար-
կումներից: Դեռ աւելին, նկատի ունենալով սպիտակ
ջարդի վտանգը, որը Հայաստանի արտագաղթի հետե-
ւանքով ստանում է ծաւալուն բնոյթ, միացեալ ուժերով
պէտք է լուծել ՀՀ-ի Ազգային Հեռուստատեսութեան նիւ-
թական եւ այլ դժարութիւնները, որպէսզի զանգւածային
լրատուական ու քարոզչական այս կարեւորագոյն հա-
ղորդակցական լծակը ազգային ուրոյն դիմագծով յաջողի
իր հայապահպանման կարեւոր առաքելութեան ու
քարոզչականութեան մէջ:

Համոզւածօրէն կարելի է պնդել, որ լեզուագիտութեան
ու թարգմանական արեստի տեսակետից Հայաստանում
մարդու ռջ միայն պակաս չկայ, այլեւ այս առումով
կան գործազուրկներ, որոնց ներգրաւումը Ազգային Հե-
ռուստատեսութեան մէջ կը նպաստի որոշ թու ընտանիք-
ների տնտեսական ճգնաժամի վերացմանն ու... Հայաս-
տանում մնալուն: Նոյնը կարելի է ասել նաեւ դերասան-
ների մասին: Սակայն այն մասին, թէ ինչպիսի տեխնոլո-
գիական հնարաւորութիւններով է օժտւած ՀՀ-ի Հեռուս-
տատեսութիւնը, դժար է դատել: Ինչեւէ, դրամական ներ-
դրումների դէպքում դիւրութեամբ կարելի է ստեղծել հա-

մապատասխան կադրեր ու սարքաւորումներ: Այս ուղղու-
թեամբ փափագելի է տեսնել հայ տեղական ու արտա-
սահմանեան գործարարների նիւթական գործօն հովա-
նաւորութիւնը Հ1-ի արբանեակային ծրագրին, որն ունե-
նալով գովազդային բնոյթ ինքնըստիներեան կը նպաստի
նրանց շահերին: Ցանկալի է, որ պետական քիջէից խ-
շոր յատկացումներ կատարեն ՀՀ-ի Ազգային Հեռուս-
տատեսութեանը: Ցանկալի է նաեւ, որ Հ1-ի պատասխա-
նատու անձիք որեւէ կերպ արձագանքեն սոյն յօդածին՝
լրատարանութիւններ տալով ՀՀ-ի Ազգային Հեռուստա-
տեսութեան նիւթական ու քարոյական իրավիճակի
մասին: ■

Հաղորդագրութիւն	Ճար. էջ 7-ից
9- Պրն. Հանրի Քոչարեան	36 քէ
10- Պրն. Ռոբերտ Մարգարեան	35 քէ
11- Պրն. Գեորգ Աբուլեան	34 քէ

Որոշուեց ժամանակի առաջացած լինելու պատճառով
օրակարգի միւս կէտերի սպառումը թողնել յաջորդ
նիստին:

Ժողովը Առաջնորդ Սրբազան Հօր բարեմադրութեամբ
աւարտեց ժամը 22-1/ 2 ին:

Պ.Ժ.-ի երրորդ նիստը կայացաւ դեկտեմբերի 6-ին,
ժամը 16:30-ին, Ազգային Առաջնորդարանում՝ 47 պատ-
գամաւորների ներկայութեամբ եւ թեմիս բարեխնամ
առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ եպիսկ. Սարգսեանի մախա-
զահութեամբ:

Ժողովի բացումը կատարեց Սրբազան Հօր Տէրունա-
կան աղօթքով:

Նախ ընթերցեց ու հաստատեց մախորդ նիստի ար-
ձանագրութիւնը եւ ապա ժողովը անցաւ Թ.Հ.Թ. Հաշիւե-
քըննիչ մարմնի ընտրութեան գործին: Աշխատանքի հրա-
ւիրեց մախորդ քեախոյզ յանձնախումբը եւ տեղի ունե-
ցաւ փակ քեարկութիւն, որի արդիւնքում ստացեց Թ.Հ.
Թ. Հաշիւքննիչ մարմին՝ հետեւեալ անձնակազմով:

1. Պրն. Գուրգէն Քարամեան 45 քէ
2. Պրն. Սեպուհ Անդրեասեան 43 քէ
3. Պրն. Հենրիկ ՄաՅարեան 43 քէ
4. Պրն. Գրիշ Մանուկեան 42 քէ
5. Տկն. Մարիետ Գրիգորեան 41 քէ
6. Պրն. Ռոմէլ Յարութիւնեան 40 քէ
7. Պրն. Վահիկ Դարուսի 39 քէ
8. Պրն. Սինաս Աղանեան 39 քէ
9. Պրն. Ռոբերտ Քեշիշեան 39 քէ

Այնուհետեւ ժողովն զբաղեց «Այլ հարց եւ առաջա-
դրանքներ» օրակարգով:

Տեղի ունեցաւ մտքերի փոխանակութիւն, դիւանին
տրեցին առաջարկութիւններ՝ առ ի քննարկում: Ժողովը
աւարտեց ժամը 18: 30-ին՝ Սրբազան Հօր աղօթքով:

12- որ շրջանի ՊԺ դիւան

«Լոյս» երկշաբաթաբերթը ջերմօրէն շնորհա-
ւորում է նորընտիր Թեմական կորիորդին:



Հասարակական

êi³óõ³Í · ñãõÃÇõÝ

Խմբագրութիւնը ստացել է յարգելի դոկտոր Չարմիկ Դաւթեանի գրչին պատկանող յոյժ կարեւոր եւ շահեկան մի յօդած, որը հրատարակում ենք ստորեւ : Այս յօդածում նշւած որոշ հարցերի կապակցութեամբ գրել են երկու պատասխան գրութիւն «Լոյս»-ի խմբագրութեան կողմից նաև ատանձին յօդած խմբագրութեանս անդամ պրն. Անդրանիկ Խեչումեանի միջոցով, որոնք ներկայացուում են բուն յօդածից յետոյ:

Խմբագրութիւնը հարկ է համարում աւելացնելու, որ մասնուլը (նկատի ունենք անկախը եւ ոչ թէ կուսակցականը) կեանքի է կոչել անաչառօրէն պարզելու համայնքին յուզող հարցերը եւ ոչ թէ նրանց բողոքել, եւ հենց այդ պատճառով չափազանց ուրախ ենք յարգելի դոկտ. Չարմիկ Դաւթեանի եւ միւսների այդպիսի յօդածների համար, քանզի եթէ անճիշտ տեսակներ փոխանցւած լինեն, հենց այդ յօդածներով եւ տարբեր մտքերի եւ տեսակետների փոխանակման եւ բախման շնորհիւ է հնարարը ներկայացնել ամենաճշմարիտ ու հաւաստի տեսակները:

ԽՍԲ.



11 Դեկտեմբեր 2000

Յարգոյ Խմբագրութիւն

«Լոյս» Երկշաբաթերթ.

Յարգելի պարոնայք,

Ուրախալի եւ գնահատելի երեւոյթ է «Լոյս» յարգոյ երկշաբաթերթիդ ցուցաբերած հետաքրքրութիւնը Իրանահայ հասարակական- մշակութային եւ տնտեսական կեանքի վերաբերեալ, որը արտացոլում է լոյս ընծայած մի շարք բնութագրական եւ քննադատական յօդածների եւ հարցազրույցների մէջ:

Նման ձեռնարկներ, անկասկած, ժողովրդին կը դարձնի աւելի քան շահախնդիր եւ զգայուն համայնքային ընդհանրական շահերի եւ կենսական հարցերի նկատմամբ, ազգային կեանքը կը դարձնի բովանդակալից եւ նպատակասլաց, կառաջացնի միութիւն եւ միասնականութիւն ու վերջապէս, պատասխանատու մարմիններից եւ անձնատրութիւններին կը դարձնի աւելի աչալուրջ, զգաստ եւ բծախնդիր: Նմանապէս, դա պատճառ կը դառնայ, որ հաւանական սպրտումներն ու թերացումները պակսելով՝ շիտակ գործունեութիւնը քաջալերի:

Վերջերս, յարգոյ թերթիդ մէջ լոյս են տեսել մի շարք հարցազրույցներ կատարած ԹՀԹ 11-րդ շրջանի ՊԺ-ի անդամների ոմանց հետ հարցազրույցները մեծ մասամբ տարել են ՊԺ-ի կազմութեան ու գործունեութեան եւ Հայաստանում 1988-ին տեղի ունեցած ահաւոր երկրաշարժի առթիւ իրանահայութեան կատարած օժանդակութիւնների ուղղութեամբ:

Վերոյիշեալ հարցազրույցները տպագրելու օրերին երբ գտնուում էինք ԹՀԹ. 12-րդ շրջանի ՊԺ-ի ընտրութիւնների սեմին, հասկանալի էր խօսել եւ ժողովրդին տեղեակ պահել ՊԺ-ի կազմութեան եղանակի, ընտրութեան ձեւի, ազգային դրածքի կառոյցների եւ մանօրինակ այլ կազմակերպչական-վարչական հարցերի մասին: Ցանկալի էր ու մինչեւ իսկ անհրաժեշտ խօսել ու քննադատական ակնարկներ ունենալ ՊԺ-ի անցած տարիների ընթացքում տարած աշխատանքի վերաբերեալ:

ԹՀԹ. 11- րդ ՊԺ-ը եւ նրանից բխած մարմինները կեանքի էին կոչել այն ժամանակ, երբ Իսլամական յեղափոխութիւնը հազիւ յաջողած՝ երկիրը մխրճած էր Իրան-Իրաք պարտադիր պատերազմի մէջ: Այն օրերին բազմաթիւ եւ բազմապիսի աշխատանքներ էր բարդւած ազգային մարմինների ուսերին, որոնցից մէկ մասը շարունակութիւնն էր 10-րդ ՊԺ-ի եւ յարակից մարմինների աշխատանքների: Այդ կարգին են պատկանում պատերազմի ճակատին օգնելու աշխատանքների ծրագրատրումն ու գործադրումը՝ մարդոժ առաքելու եւ նիւրահաւաք կատարելու ուղղութեամբ, հայ արհեստատրների պարբերական ուղեւորումը պատերազմի գօտի: Դրանց կողքին, կարիքատրների հնարատրութիւնների սահմաններում օգնութիւն հասցնելու աշխատանքը: Այս, հայոց դպրոցների, սրահների եւ մշակութային միութիւնների աշխատանքների վերակսման առթիւ կատարած ձեռնարկները, ինչպէս նաեւ լեզվի եւ կրօնի դասաժամերի դասատրման համար կատարած բանակցութիւնները եւ հայոց լեզվի ու կրօնի դասագրքերի վերահրատարակութեան աշխատանքները: Նրանից յետոյ առաջ եկած մշակութային ձեռնարկների, ելոյթների եւ միութեանկան աշխատանքների ապահովման եւ հարատւման ձեւաւորում տալու հարցը, նոյնպէս հայ վերակացու եւ տեսուչ ունենալու հարցի հետապնդումը եւ համալսարաններում հայագիտական ամբիոնների ապահովման ու հայագիտական գիշերային դասընթացների վերակազմելը:

Այս բոլորի հետ միատեղ, պէտք էր եկեղեցիները բանուկ պահելին, եկեղեցիներում եւ դպրոցներում նորօգութիւններ կատարելին եւ նրանց առօրեայ կարիքները հոգացելին: Կար նաեւ Դուլքի գերեզմանատան եւ Նոր բուրասատանի շուրջ առաջացած հարցերի քահանայից դասի գորացման եւ նոր քահանաների ձեռնադրութեան մասին աշխատանք տանելը: Բնականաբար, կար նաեւ առօրեայ արտակարգ հարաճուն ծախսերը ծածկելու հարցը, Առաջնորդարանի առօրեայ աշխատանքները ընթացքի մէջ պահելու աշխատանքը, եւ բազմաթիւ այլ հասարակական եւ բարեսիրական աշխատանքներ ու դրանց կողքին թեմիս կանոնադրութեան պետական վստեղացման ու 12-րդ ՊԺ-ի ընտրութիւնների արտօնութիւն ստանալու երկարատեւ աշխատանքի հետապնդումը: Չեմ նշում բազմաթիւ այլ աշխատանքները, որ անցնող 14 տարիների ընթացքում տարել են տարբեր բնագաւառներում: Չեմ յիշատակում նաեւ Հայաստանի 1988 թականի աղէտալի երկրաշարժի բերմամբ երեսու բերած անխոնջ աշխատանքը: Այնուամենայնիւ, քիչ յետոյ կանդադառնան այս հարցին՝ այն չափով, որ վերաբերում է արծարծւած ճիւղին:

Յարգոյ թերթիդ մէջ լոյս տեսած ՊԺ-ի կապակցութեամբ հարցազրույցների մէջ, սպասելի էր տեսնել ազգային-եկեղեցական մարմինների, նմուշի կերպով, վերջ յիշած աշխատանքների գէթ մի փոքր բաժնի մասին՝ քննադատական- վերլուծական տեսութիւններ կամ առնուզն լուսաբանական հարցումներ ու տեղեկութիւններ:

Բայց, ցաւօք սրտի, դա չնշմարելուց բացի, ընթերցողը ստանում էր այն տպատրութիւնը, որ աշխատանք է տարել կանխորոշւած ձեւով բացասական վերազնուներ կատարել եւ ազգային մարմինների գործունեութիւնը նսեմացնել: Հարցազրույց վարողների հարցումների եղանակը այդ են թելադրում: Ոչ մի ակնարկ ու հետաքրքրութիւն բազմաթիւ այն աշխատանքների մասին, որ տարել են երկար այս տարիների ընթացքում: Իսկ, դրա փոխարէն, կարմիր գծի պէս, բացասական իմաստով ու կանխավճռած ձեւով բոլոր հարցազրույցների մէջ արծարծել են Հայաստանի 1988 թականի աղէտալի երկրաշարժի առիթով իրանահայութեան կատա-



Հասարակական



րած օժանդակությունը ու նամանաւանդ «Ծորակաշինութեան» հարցը:

Աղէտի գօտուն, իրանահայութեան բերած օժանդակութիւնը, անկասկած, կարեւոր հարցերից է, բայց դրա կողքին կան այժմեական բնոյթ կրող այլ կարեւոր հարցեր նաեւ, ինչպէս օրինակ՝ արտագաղթի կնճռոտ հարցը, պատանկութեան եւ երիտասարդութեան հոգեմտաւոր ու հասարակական դժարութիւնները, մատաղ սերունդի ընտանեկան եւ հայեցի դաստիարակութիւնը, անտուն մնացած անճանաչութիւնների ու յատկապէս անխնամ արձակած տարեցների ողբալի վիճակը եւ ի վերայ դրանց աղանդատրաց շարժումի ազգադրուժ հարցը:

Այս բոլորով հանդերձ, երանի թէ Հայաստանի աղէտի գօտուն իրանահայութեան օժանդակութեան եւ «Ծորակաշինութեան» հարցը վերլուծելու եւ քննադատելու լինելով հասարակ տեղեկութիւնների վրայ, լինել փաստացիօրէն եւ արդար մօտեցումով, ոչ թէ թերի ու անճիշտ տեղեկութիւնները հիմք ծառայեցնելով՝ նախապաշարած ու կանխորոշած վիճիւ կայացնել այնպէս՝ ինչպէս երեսն է եկել Պրն. Անդրբանիկ Խեչումեանի յօդաւածում («Լոյս» համար 14, Հոկտ. 15, 2000 թ., էջ 12,13)

Յարգելի խմբագրութիւն, անհրաժեշտ եմ գտնում ուրեմն, խնդրոյ առարկայ հարցի վերաբերեալ ներկայացնել ամփոփ տեղեկութիւններ՝ քաղած Ազգային Առաջնորդարանում գտնուող պատկան արխիւներից, «Այլք» օրաթերթում լոյս տեսած հաղորդագրութիւններից (12 դեկտ. 1988, 6 փետ. 1993, 9 Մայրիկ 1996), ինչպէս նաեւ ԹՀԹ. 11-րդ ՊԺ-ի հաշ-ւեքննիչ մարմնի ու նոյն ժողովի փետրուար 1999 թականին կեանքի կոչած քննիչ յանձնախմբի զեկուցագրից:

Համաձայն այս փաստաթղթերի, Հայաստանի դեկտ. 7, 1988 թականի աղէտաբեր երկրաշարժից անմիջապէս յետոյ, թեմիս Բարեխնամ Առաջնորդ, լուսահոգի Գերաշնորհ Տ. Արտակ Արք. Մանուկեանի հովանաւորութեամբ եւ ժամանակի Թեմական Խորհրդի անմիջական մասնակցութեամբ կազմուում է Հայաստանին օգնութիւն հասցնելու, «Շտապ օժանդակութեան յանձնախումբ»: Սոյն յանձնախումբը, իրանահայութեան ներատուութիւններից զոյացած անհրաժեշտ ամեն կարգի ուտեստեղէն, հագուստ, դեղո-րայք, ինչպէս նաեւ 100.000 դոլար տարադրամ՝ որպէս ան-միջական օգնութիւն փոխադրում է աղէտի գօտի: Այնուհետեւ, կենսական պիտոյքների առաքումը շարունակելով՝ 1991 թականին, երբ արդէն աւելի քան երեք տարի անցել էր այդ աղէտալի դէպքից եւ անմիջական օժանդակութեան հարկադրանքները մեծ մասամբ վերացել էր, պատկան յանձնախումբը խորհրդակցելով Հայաստանի Հանրապետութեան պատասխանատու մարմինների եւ անձանց հետ յանձնիս՝ Հ.Հ. Արդիւնաբերութեան Նախարարութեան եւ Գերագոյն Խորհրդի աղէտի գօտու վերաշինութեան յանձնաժողովի, միասնաբար որոշեց ձեռնարկել արդիւնաբերական եւ հասոյթաբեր այնպիսի մի աշխատանք, որից զոյացած հասոյթը մնայուն կերպով պիտի ծառայէր աղէտի գօտու բարեշինման գործին եւ միեւնոյն ժամանակ առիթ ծառայէր, որ մի քանի ընտանիքներ ապրուստի եւ եկամտի աղբիւր ունենային: Ուստի, նկատի ունենալով իրանահայ-յութեան նւիրաբերած դրամներից մնացեալ գումարի կա-րողութիւնը (358. 231. 211 ռ.) խորհրդակցութեան արդիւնքը եղաւ այն, որ հիմնի ծորակաշինութեան մի գործարան, որի կարիքը եւս այն օրերին զգացում էր:

Ի հետեւումն այս որոշման, 1991 թականի յունիսի 3-ին Հայաստանի «Պոզիտար» արտադրական միաւորման հետ կնքեց մի պայմանագիր, ըստ որի գործարանը պիտի կառուցէր Արովեան քաղաքի Պոզիտար Գործարանային համալիրի շրջափակում: Յանձնախումբը զնեց գործարանը, սակայն գործարանի տեղադրումը տեղի չունեցաւ, որով-հետեւ

վերոյիշեալ միատրը չկարողացաւ ի կատար ածել իր յանձնառութիւնը:

Յանձնախումբը հետապնդելով հարցը յաջողում է նրան 11 նոյեմ. 1993 թ.-ին Կապանի շրջափակի հետ կնքել «Մտադրութիւնների արձանագրութիւն», որով կողմերը յանձնառու են լինում Կապանի շրջանում հիմնել «Իրան-Արմէն» ծորակների արտադրութեան գործարան:

«Իրան- Արմէն» յանձնախմբի 9 մարտ 1996 թականի հաղորդագրութիւնից պարզում է, որ վերը յիշած պայմանագիրը կնքելուց յետոյ, կողմերը անցնում են աշխատանքի եւ գործարանը տեղադրում է նոր վայրում: Սակայն ՀՀ-ում սեփականաշնորհման օրէնքի անցկացումից յետոյ, համա-տեղ ձեռնարկութիւնը եւս ենթարկւում է փոփոխութեան, որի հետեւանքով 1997-ին ընկերութեան կանոնադրութիւնը եւս փոփոխութիւն կրելով, նոյն թականի դեկտ. 18-ին նոր կանոնադրութիւնը վերջնականապէս վաւերացելուց յետոյ պաշտօնապէս գրանցում է եւ գործարանը սեփականութիւնն է համարում Կապանի քաղաքապետարանի եւ իրանահայ երեք թեմերի: Այնուհետեւ, 1988 թականից, ի վերջոյ, գործարանը, թէ՛ շինարարական եւ թէ՛ իրաւական տեսակետից պատրաստ է լինում օգտագործելու:

Պրն. Խեչումեանը յարգոյ թերթիկ անուցից յայտարարում է, թէ «...անկախ թերթի պարտականութիւնն է պար-զարանել հասարակութեան մէջ ծագած խնդիրները եւ ի լոյս բերել իրականութիւնը»: Ի միջանկեալ, ուրախալի եւ գովելի է, որ Պրն. Խեչումեանը բարձր է գնահատում անկեղծութիւնը: Ինչ խօսք, որ անկեղծութիւնը բարձր գնահատում առաքինութիւն է: Եթէ այդպէս է, եւ եթէ Պրն. Խեչումեանը «անկեղծօրէն» իրականութիւնը պարզելու հետամուտ էր, ինչո՞ւ չի դիմել ծորակաշինութեան գործին ուղղակիօրէն մասնակցած եւ լուստեղեակ անճանաչութիւններին թէ՛ տեղումս եւ թէ՛ ՀՀ-ում , եւ ինչո՞ւ անողութիւնը չի կրել ուսում-նասիրելու պատկան արխիւները:

Ազգային մարմինները երբեքից այն հաւակնութիւնը չեն ունեցել, որ անսխալ են եղել: Նոյնպէս երբեք չեն աշխատել, թէ թերացում կամ սխալ է տեղի ունեցել, իրականութիւնը ծածկել կամ այլափոխել:

Ինչպէս վերը նկատելի դարձաւ, գործարանի տեղադրումը եւ արդիւնաբերութեան սեմին հասցնելը դէպքերի եւ դրութիւնների բերմամբ երկարել է: Իսկ, այդ բոլորը, ի վերջոյ, կատարելուց յետոյ, գործարանը բանեցնելու եւ թո-ղարկում կատարելու համար, յանձնառու անճանաչութիւնը կամ ընկերութիւնը, թող լինի դա պետական կամ ոչ պետական, առաջին հերթին պէտք է որոշ գումար ներդրում կա-տարի: Ներկայումս, դժարութիւնը կայանում է հեճ դրա-նում, որ մինչ այժմ մի անճանաչութիւն կամ ընկերութիւն (պետական կամ ոչ պետական) պատրաստ չի գտնել ընդու-նելու այդ յանձնառութիւնը:

Յարգելի յօդաւածագիրը եթէ անկեղծ մօտեցում ունենար, այլեւս հարց չպիտի տար թէ «...ինչպէ՞ս է, որ չեն գտնել մարդիկ, որոնք ցանկութիւն յայտնեն գործարանի ղեկավարութիւնը յանձն առնելու ...հետաքրքիր է, որ յարգելիները ինչո՞ւ են տարածում թէ գործարանը ո՞ւմ տրամադրեն, միթէ Հայաստանը անկախ չէ՞, միթէ՞ Հայաստանը չունի իր պետութիւնը...»:

Նոյնպէս, եթէ Պրն. Խեչումեանը անկեղծօրէն իրականութիւնը ի յայտ բերելու հետեւից էր՝ նման հարց չէր յարուց-ի թէ «...երբ աղէտեալները բաց երկնքի տակ անօթեան ցերեկ ու գիշեր էին անցկացնում, երբ նրանք տուն չունէին՝ ծորակը նրանց ինչ՞իւն էր պէտք»: Պէտք չէ սրտցատութիւնը մրցակցութեան միջ ծառայեցնել:

Շար. էջ 14-ում



Հասարակական



Յարգելի դուկտ. Դաւթեան



Ստացանք Ձեր գրչին պատկանող 11 դեկտ. 2000 թականի եօթ էջանոց մամակը, որը ուշադրութեամբ ընթերցուց: Շնորհակալ ենք Ձեր բարի արտայայտութիւնից «Լոյս» երկշաբաթաթերթի վերաբերեալ և ուրախ ենք, որ մեր տարած աշխատանքները Ձեր ուշադրութեան են արժանացել:

12-րդ ՊԺ-ի շեմին կատարած հարցազրոյցները այն նպատակով են կատարուել, որ մեր համայնքին ծանօթացնեն մեր ազգային դրացները և ՊԺ-ի կարեւորութիւնը, համայնքին պարզաբանել այդ երկարատեւ ժամանակաշրջանում կատարած աշխատանքները, գնահատել դրական կողմերը և որպէս փորձառութիւն, դաս վերցնել գործերի թոյլ և բացասական կողմերից:

Մեր թերթի նպատակը և ուղեգիծը ազգային դրացների անտեսումը չի եղել և չի լինելու, և եթէ ասուլիսների ընթացքում որոշ հարցեր են արտացոլուել, որ Դուք միտումնաւոր էք անուանել, դա վերագրէք երկար տարիներ համայնքին անտեղեակ պահելուն, այլախոհ մարդկանց անտեսելուն և մեր ազգային կեանքից նրանց հեռու պահելուն: Ինչ որ վերաբերում է «Լոյս» երկշաբաթաթերթին, ապա պետք է ասել, որ մենք յարգում և բարձր ենք գնահատում մեր բոլոր ազգային կառույցներին՝ ՊԺ-ին և Թեմական Խորհրդին և դրանց բոլոր պատկան յանձնարարներին ու խորհուրդներին:

Մենք բարձր ենք գնահատում ՊԺ և ԹԽ կատարած աշխատանքները Իրանի Իսլամական յեղափոխութիւնից յետոյ, մանաւանդ Իրան-իրաքեան պատերազմի ընթացքում:

Հարցերը, որոնք տարբեր հարցազրոյցներում արժարծում էին, ազգային կալածների և ծորակաշինութեան գործարանին էին վերաբերում, որոնց մասին երբէք ճշգրիտ և լրի կերպով ժողովրդին չի գեկուցուել:

Հարցը սա է, որ իրանահայ համայնքը 1988 թականի դեկտ. 7-ին Հայաստանում տեղի ունեցած ահեղի երկրաշարժին, որը խլեց 25000-ից ատելի հայերի կեանքը և մեծ թով հաշմանդամներ և հազարաւոր մարդկանց տուաքանդ արեց: 70 միլիոն թուման կանխիկ դրամ և հազուատ և տարբեր տեսակի մթերք նւիրեց այն օրայ օժանդակ մարմիններին, դրամի արժէքը տարադրամով մօտ 560,000 ԱՄՆ դոլար էր լինում (1988 թականին դոլարի արժէքը 120-ից 125 թուման էր) շատ գնահատելի է, որ դրանից 100,000 ԱՄՆ դոլարն անմիջապէս յանձնեց Վազգէն Վեհափառին, բայց մնացած գումարն ինչո՞ւ երեք տարի մնաց Առաջնորդարանի հաշուում և յետոյ յանձնախումբը խորհրդակցելով Հայաստանի Արդիւնաբերական նախարարի հետ որոշեց ծորակաշինութեան գործարան կառուցել, միթէ՞ աղէտի գօտում ուրիշ հայ համայնքների կամ օտար երկրների օժանդակութեամբ կառուցած դպրոցները, հիւանդանոցները, բնակարանները Հայաստանի նախարարների հետ խորհրդակցութեա՞նք էին որոշուել, թէ ամէն մի երկիր որոշուել էր ինչ պիտի կառուցի և Հայաստանի կառավարութեանը տեղեակ պահելով աշխատանք էին սկսել:

Համաձայն մեր թեմի կանոնագրութեան, մեր ազգային բարձրագոյն ատեանը ՊԺ-ն է, որն ընտրում է ԹԽ, և

յետոյ յանձնախումբեր, ապա խորհուրդներն ընտրում են ԹԽ-ի միջոցով, դա ի՞նչ յանձնախումբ է, որ այսպիսի խոշոր ներդրումների համար որոշում է կայացրել: Ըստ մեր տեղեկութիւնների՝ ծորակաշինութեան գործարանի կառուցումը երբէք ՊԺ-ի օրակարգ չի դարձել և յաւելեալ դրան կանոնագրի ո՞ր յօդածն է, որ թոյլատրում է ԹԽ-ին Հայաստանում այդ կարգի շահաբերական նպատակով ներդրումներ կատարի (իհարկէ շահոյթն յատկացուելու էր աղէտի գօտում) և միթէ՞ այդ գործարանը աղէտի գօտում օժանդակելու նպատակով չէ՞ր կառուցում, ինչո՞ւ Դաւիթեան քաղաքում, որ հարիւրաւոր կիլոմետր Սպիտակից կամ Գիւմրիից հեռու է:

Իրանահայ համայնքի նւիրաբերած դրանը աղէտեալներին օգնելու նպատակով էր կատարուել, բայց այդ դրամով յանձնախումբը Իրան-Արմէն ընկերութիւն է կազմել, իրականօրէն դա լինում է այդ ընկերութեան սեփականութիւնը և ոչ թէ աղէտեալներինը:

Պարզ է, որ ոչ մի ազգային խմբակցութիւն չի ցանկացայ իր կատարած աշխատանքը ձախողի, ընդհակառակը յաջողութեան դէպքում պարծանք կը շնորհի նրա գործունէութեանը:

Այս ձախողած վիճակում էլ, եթէ ՊԺ-ի հաստատումը լինէր, միանգամայն այդ հարցերը կը փակուէին: Ձեր նամակում շեշտած գեկոյցներից և ոչ մէկը չի կարող ՊԺ-ի վաւերացմանը փոխարինել, դա մեզ համար պարզ է:

Ձեր հարցին՝ «Հէնց դրանում է, որ մինչ այժմ մի անձնաւորութիւն կամ ընկերութիւն (պետական կամ ոչ պետական) պատրաստ չի գտնուել ընդունելու այդ յանձնարարութիւնը» պիտի պատասխանել, որ այդ գործարանի պակասները լրացնելու համար շատ աշխատանքներ պիտի կատարուել, որոնցից մէկն այս է, որ նիկելապատմանը գործածած ցիանիդը (ցիանաթթի աղ, սիանուր) շատ վտանգաւոր թոյն է և բնասպահական մտեսակետից թոյլատրելի չէ դրան դատարկելու որեւէ հորում, և պիտի յատուկ ձեւով ցիանիդի քիմիական բաղադրոյթով չեզօքացնել այն: Նաեւ սնդուկներում պահող գործարանի սարքաւորումների դասաւորման և մոնտաժման և հումք գնելու և արտադրութեան շուկայ հասցնելու համար 250,000 ԱՄՆ դոլարի կարիք կայ, ի դիմաց Հայաստանում տարեկան ընդամենը 6000 ծորակի պահանջ գոյութիւն ունի: Նաեւ պիտի այս հանգամանքն էլ նկատի առնել, որ այն ծորակները, որոնք պիտի արտադրուեն Դաւիթեան գործարանում, արդէն հնաճ և շարքից դուրս են (նոր ծորակները մէկ լծակով տաք և սառ ջուր են բաց անում և խառնուրդը հոսեցնում), և Հայաստանը լինելով ազատ առեւտրի երկիր, մանաւանդ, որ համարում է, որպէս եւրոպական երկիր, հնարաւորութիւն չի ունենալու որպէս միջազգային մրցակից արտահանի այդ ծորակները այլ երկրներ:

Յարգելի դուկտ. Դաւթեան, պրն. Ա. Խեչումեանն ու միւսները տարիներից յետոյ առիթ են ունեցել, մեր համայնքի հարցերի շուրջ քննադատական յօդածներ գրել: Դուք Ձեր մամակում ՊԺ և ԹԽ աշխատանքների վերաբերեալ աշխատել էք յօդածագրի նպատակը և քննադատութիւնները նսեմացնել և բոլորովին այն, որ պիտի ասէիք՝ չէք անդրադարձել և դարձեալ հարցերը մթութեան մէջ էք պահել:

Ճար. յաջորդ էջում



Էլի նոյնն է՝ «Պատրանքով ծարալ չես յազեցնի»

Յարգածան դր. Հարմիկ Դալթեան, կարդացի «Լոյս» երկշաբաթաթերթին յղած Ձեր նամակը եւ անչափ շնորհակալ եւ ուրախ եմ Ձեր ցուցաբերած անկեղծ եւ դրական մտնեցումից թերթիս նկատմամբ. յարգարժան դր. ուրախ եմ նաեւ, որ իմ գրած յօդածը արժանցել է Ձեր ուշադրութեանն, եւ դա առիթ է ստեղծել, որպէսզի Դուք թափանցիկ պարզաբանումներ անէք: Սակայն լաւ կը լինէր, եթէ նման պարզաբանումները կատարուէին աւելի շուտ. իհարկէ միայն Ձեզ նկատի չունեմ, նկատի ունեմ մեր համայնքի բոլոր պատասխանատու անձերին, քանի որ, եթէ պատասխանատուները իրենց յանձնարարած պարտականութիւնները ճիշտ եւ պատշաճ կերպով չներկայացնեն, դա առիթ կը տայ *անճիշտ տեղեկութիւնների եւ սխալների*, եւ Դուք լաւ գիտէք, որ *«մեծերի սխալները մեծ են լինում»:*

Միւրեւի դր. իմ յօդածում շեշտու եղել է ծորակաշինութեան գործարանի խնդիրը եւ պարզ է, որ պիտի օգուտի այդ խնդրին կապուող Ձեր եւ ուրիշ պատգամատրների տւած բացատրութիւններից, եւ այդ պատճառով է եղել, որ չեմ անդրադարձել Ձեր նամակում այն պատասխանատու եւ բարդ ու դժուար աշխատանքներին, որը կատարել էք Դուք եւ 11-րդ շրջանի յարգարժան պատգամատրները եւ այդ համոզմունքի բերումով էլ իմ յօդածում գրել եմ «...իհարկէ գնահատելի է 11-րդ շրջանի ՊԺ երկար տարիներ մասնակցած բոլոր պատգամատրների աշխատանքը, նրանք իրենց ջանքը չեն խնայել մեր ազգային եւ հասարակական խնդիրները լուծելու գործում...»:

Յարգելի դոկտոր Դալթեան, Դուք ինձ մեղադրում էք, որ յօդածս գրել եմ «թերի եւ անճիշտ տեղեկութիւնների» հիման վրայ, ուստի ցանկանում եմ Ձեզ յիշեցնել, որ այդ «թերի ու անճիշտ տեղեկութիւնները» եւ քաղել եմ Ձեր ու ուրիշ պատգամատրների պատասխաններից, եւ մինչեւ անգամ մի կէտ ինքս չեմ անելացրել դրանց, եւ քանի որ համոզուած եմ Ձեր նամակում արտայայտած մտքերը անկեղծ են, ուստի խնդրում եմ մէկ անգամ եւս կարդալ իմ յօդածը ու համեմատել պատասխանների հետ, այն ժամանակ Ձեզ համար կը պարզի, թէ «անճիշտ տեղեկութիւնները» տեղ են հարցերին պատասխանողները:

Յարգարժան դոկտոր, անձամբ համոզուած եմ, որ մեր թերթում տպագրուած բոլոր յօդածները գրել են անկեղծութեամբ, իհարկէ Դուք իրատուք ունէք կասկածել դրանց, քանի որ երկար տարիների մեծատիրութեան մթնոլորտի պատճառով առիթ չի եղել, որպէսզի տարբեր տեսակետներ ու գաղափարներ ի յայտ գան: Մեծատիրութեան ու ոչ հանդուրժողականութեան տարիներին տիրել է կասկածամտութիւն, անվստահութիւն, եւ իշխող խարդժախտարար միայն իրեն է ճշմարտութեան տէրը համարել, եւ բնական է, որ նման մթնոլորտում մէկս միսի մօտեցումները, տեսակետները եւ քննադատութիւնները որակաւորեն, որպէս *«նախապաշարած կանխորոշումներ»:*

Յարգարժան դոկտոր, արդէն ժամանակն է, որ բոլոր-ընդհատակցենք ժամանակի լրջութիւնը, արդէն ժամանակն է, որ ընդունենք անցել է մեծատիրութեան շրջանը, արդէն ժամանակն է, որ բոլորս միասնաբար աշխատենք յանուն

Իրանի բարգաւաճման եւ լծենք մեր համայնքում գոյութիւն ունեցող խնդիրները, յատկապէս արտագաղթի տհաճ երեւոյթը լուծելու գործին: Արդէն պիտի ընդունենք, որ գոյութիւն ունեն «փմ» տեսակետից բացի ուրիշների տասակետներն եւս:

Միւրեւի դոկտոր, Դուք լաւ գիտէք, որ պատմութիւն չունեցող ժողովուրդը մատուած է ոչնչացման, եւ քանի որ 11-րդ շրջանի ՊԺ-ի փոթորկալից տարիները մեր իրանահայերի պատմութեան մի մասն է, ուստի դիմում եմ Ձեզ եւ այդ շրջանի միւս պատգամատրներին եւ խնդրում, որ ճշգրիտ ու պարզ, ձեր տարիների տարած աշխատանքների արդիւնքը եւ փորձը փոխանցէք ապագայ սերնդին: Նաղեր էրբահիմին գրում է.- «Եկ թոյլ տանք, որ մեր տարածայնութիւնները նոյնիսկ հիմնականները պահպանեն, սակայն երբէք տարածայնութիւնը թշնամանքի առիթ չդառնայ»:

Վերջում եւ էլ փոխադարձաբար Ձեզ եւ Ձեր անմիջական հարազատներին ջերմօրէն շնորհատրում եմ Ամանորի եւ Ս. Ծննդեան տօները:■

Անդրանիկ Խեչումեան

Հարցը սա է, որ արդեօք Դուք ծորակաշինութեան վերաբերեալ բոլոր հարցերից տեղեակ էք եղել, թէ ոչ: Եթէ պատասխանը դրական է, որպէսզի ժողովրդի դիմաց մեր ազգային անեմաբարձր ատեանի պատասխանատու, ի՞նչու ՊԺ-ի օրակարգ չէք դարձրել եւ եթէ տեղեակ չէք եղել, ի՞նչու հետագայում հարցը բացայայտելուց յետոյ Ձեր բողոքը չէք ներկայացրել: Ուրեմն Դուք երկու պարագաներում էլ այդ հարցում մեղադրներից մէկն էք: Պրն. Ա. Խեչումեանին ամբողջապար կոչելն էլ սխալ է, նա մի ձայնուած ծրագիր քննադատութեան է ենթարկել:

Ինչպէս, որ Դուք Ձեր նամակի սկզբում շեշտել էք, որ քննադատութիւնը դրական բնոյթ ունի, մենք էլ նոյն կարծիքին ենք: Մեր նպատակը համայնքի քայքայումը չէ, մենք ուզում ենք մեր համայնքում միասնականութիւն լինի, եւ ազգային բոլոր կառոյցները կանոնադրութեան համաձայն իրենց պարտականութիւնները կատարեն, որպէսզի ապագայում մի պատգամատր 14 տարուց յետոյ հանրածանօթ ազգային գործիչ եւ մտաւորական 11-րդ ՊԺ-ում եւ մամուլով չյայտարարի, որ 14 տարի 11-րդ ՊԺ-ում խրտուիլակ է եղել:■

Ճար. էջ 12-ից

Յարգելի խմբագրութիւն, ուրախ կը լինեմ եթէ բարեհաճէք գրութիւնս հրատարակելու յարգոյ թերթիդ յառաջիկայ համարներից մէկում ի լուսաբանութիւն, որի համար խնդրում եմ ընդունել կանխապայտ շնորհակալութիւններս: Միեւնոյն ժամանակ ցանկանում եմ մեր յարգելի յօդածագրերի ուշադրութեանն յանձնել, որ առողջ քննադատութիւնը (եւ ոչ թէ նախապաշարած կանխորոշումները) միշտ էլ օգտակար են եղել եւ շինիչ հանգամանք են ունեցել: Բայց պէտք է ուշադիր լինենք, որ քննադատութիւնը չփոթենք ամբողջապարտութեան հետ:

Վերջում, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօները մտալուտ լինելով՝ ջերմագին շնորհատրանքներս յղելով Ձեր եւ թերթիդ յարգելի բոլոր կազմին ցանկանում եմ, որ Ձեր ջանքերը պատկի կատարեալ յաջողութեամբ՝ ի նպաստ Իրանի ժողովրդի բարորութեան եւ վերելքի ու հայ ժողովրդի արդար իրաւունքների վերականգնմանը:

**Յարգանք՝
Դոկտ. Հարմիկ Դալթեան**



Մշակոյթ



«Մայրենի լեզու» Դասական Ուղղագրութեան Կանոններ

ՌաՅայել Իշխանեան

Յիշենք, որ *ի* տառից յետոյ բառերի վերջում, ինչպէս եւ միջում՝ ձայնաւորից առաջ նոյնպէս գրուած է *ի* դարձեալ *վ*-ի արժէքով. օրինակ՝ *կռի, շի, արծի, թի, անի, անթի, ասթի, պատի, դիւանագէտ, հիւանդ, ճիւղ, ջիւան* եւ այլն: Բայց միշտ չէ, որ *ի* տառից յետոյ *ի* տառը *վ*-ի արժէք ունի:

Բաղաձայնից առաջ *ի* եւ *լ* տառերը բոլորովին այլ նշանակութիւն ունեն. նոր ուղղագրութեան *յու* երեք տառի փոխարէն ըստ դասական ուղղագրութեան դրուած է *իւ* երկու տառը, ինչպէս՝

արին	բարութիւն
սին	ծուլութիւն
ալիւր	կրթութիւն
բիւր	թերութիւն
հին	հնչիւն
հիւլ	քաղցրութիւն
հիւսել	խրաքանչիւր
կորին	իւր
ճիւլ	խրացնել եւ այլն:

Հայերէնում է, *օ* տառերից յետոյ երբեք *լ* չի գրուած:

Պէտք է յիշել նաեւ, որ *լ* տառը *ռ*-ից յետոյ գոյացնում է ձայնաւոր հնչիւն՝ *ու*: Վերն ասեց, որ մեր *ու*-ն ոչ թէ մի տառ է, այլ՝ երկու (Ֆրանսերէնում էլ այդ հնչիւնը երկու տառից է բաղկացած՝ *ou*): Այս պատճառով բառերի մէջ եւ վերջում *ռ* տառից յետոյ լսող *վ*-ն գրուած ենք հենց *վ*-ով եւ ոչ թէ *լ* -ով: Օրինակ, *կով, գովք* բառերը եթէ գրենք *լ*-ով, կունենանք *կու, գուք*, որ բոլորովին այլ կերպ կը կարդացի: Այս պատճառով գրուած ենք՝ *ծով, կով, հով, սով, բովանդակութիւն, գովք, ժողովուրդ, սովորութիւն, գրքով, աչքով* եւ այլն:

Ու-ն *վ*-ի արժէքով: Բառերի մէջ *ա, ե, է, ի, ռ* ձայնաւորներից առաջ, բաղաձայնից եւ *յ* կիսաձայնից յետոյ *վ* լսելիս դասական ուղղագրութեամբ *լ* կամ *վ* չի գրուած, այլ նրանց արժէքով գրուած է *ու*, ինչպէս՝

հարուած	հաշուապահ
ջարդուածք	շուար
կալուածք	նուազ
թուարանութիւն	շույատ
պատուական	նուէր
ստուեր	հալուել
նուոց	ծուածն
Դուին	Չուարթ
նուաղել	Նուարդ
խրուել	լեզուաբան
հագուաղէպ	եւ այլն:

Տողադարձի ժամանակ առաջարկում է *ու*-ի փոխարէն *լ* գրել, ինչպէս *թուական- թը-ական, Դուին- Դը-ի*, բայց սա պարտադիր կանոն չէ:

Ածանցաւոր ու բարդ բառերի մէջ եթէ առաջին բաղադրիչն աւարտուած է *լ*-ով, յաջորդ ձայնաւորը դեր չի խաղում, *լ*-ն մնում է: Օրինակ, գրում ենք *գրաւել*, քանի որ ըսկը գրում *գրաւ* բառն է *լ*-ն մնում է: Կամ՝ *հարաւային*, նոյն-պէս գրում ենք *լ*-ով, քանի որ *հարաւ* բառն է առկայ, նոյնը եւ *ծարաւած, կաւահող, դաւաղիւր* եւ այլն:

Եթէ բառը աւարտուած է *լ* կամ *վ* տառերից մէկով, կրաւորական ձեւի դէպքում այսպիսի տեսք է ընդունում՝ *հաշուել, ներգրաւուել, գովուել*: Այսինքն՝ *հաշիւ+ ուել, ներգրաւ +ուել, գով+ուել*: Յիշենք նաեւ այսպիսի ձեւեր՝ *հրահանգաւորում է, հրահանգաւորուած, հրահանգաւորուեց, վառում է, վառուած, վառուեց, կանոնաւորում է, կանոնաւորուած, կանոնաւորուեց* եւ այլն:

Կարեւոր է յիշել նաեւ, որ կան *լ* տառով կազմուած մասնիկներ՝ - ւոր,- ւաւտ (ւէտ), - ւաւն, սրանցով կազմուած բառերի մէջ *լ*-ն պահպանում է, ինչպէս՝ *մեծաւոր, ձայնաւոր, յանգաւոր, հոտաւէտ, բուրաւէտ, շինաւում* եւ այլն:

Արեւելահայերը *վ*-ի արժէքով բառամիջում *ու*-ով գրուող բառերի մէջ *ռ*-ն կրճատում են, թողնում են *լ*-ը եւ գրում ոչ թէ *հարուած, ալլ՝ հարած*, այդպէս էլ՝ *թարաւ-նութիւն, նւէր, պատուէր, նուլ, սրուել, սաղել, Նարդ* եւ այլն:

Մինչեւ 1922 թ. փոփոխութիւնը Հայաստանում ընդունուած էր գրութեան այս ձեւը:

Ու ձայնաւորից առաջ *լ* գրելն ընդունուած է, ինչպէս՝ *գրում է, սրում է, համարում է, թում է* եւ այլն:

Այսպիսով, դասական ուղղագրութեամբ *վ* հնչիւնը արտայայտուած է երեք ձեւով՝ *վ*, *լ* տառերով եւ *ու* երկտառով՝ ըստ վերը բերուած կանոնների: ■

Ճար. 2

«Բառերի խորհրդաւոր աշխարհում»

Երեւան 1989
Պետրոս Բերիբեան

¼² ðĪ ° ð%ž, , ² ð´ ÆÛÛ°ž, Ī e² ÛÀ ... ø² ðÆÛ

Պարզ է, այս վերնագիրը հայ քերթութեան մեծ երախտաւոր Յովհաննէս Յովհաննիսեանի տողն է՝ մի փոքր բանափոխած, եւ այդ «աղաւաղումն» առաջացել է այն բանից, որ *սային* բառը փոխարինել է իր հոմանիշով՝ *քարին*-ով: Յովհաննիսեանի քառատողն այսպէս է:

Զարկեցէ՛ք, դարբիններ, կրռանը *սային*:
Զարկեցէ՛ք կրռանը- շղթայքն ամրանան,
Անիծեալ արքայի կապանքն ամրանան,
Զարկեցէ՛ք, դարբիններ, կրռանը *սային*:

(«Արտաւագր»)

Այդ *սայ*-ը հայերէն շա՛տ հին բառ է. նա առնուազն եռակի անելի «ծեր» է, քան մեր սիրելի Էրեբունի- Երեւան-ը, եւ իր մէջ մի հետաքրքրական գրոյց ունի թաքցած: Նա մեզ պատմում է, որ մեր հեռաւոր նախնիներն իրենց քարէ գործիքները «դարբնում էին» *քարէ սայերի* վրայ: Որովհետեւ... *սայ* հենց նշանակել է «քար»: Ահա թէ ինչու իր ժամանակին Փաստոս Բուզանդը գրում էր. «Իսկ թագաւորն *սայացեալ*՝ ոչ ինչ լսեր...» («Իսկ թագաւորը, *քա-*



Մշակոյթ



րացած, ոչինչ չէր լսում»): Հենց որ քարէ սալին փոխարինեց երկաթէն, այս վերջինը նոյն անունն ստացաւ, որովհետեւ նոյն դերն էր կատարում, ինչ որ *սալաքարը*: Ուստի մենք բողոքովին էլ յանկարծակիի չենք գալիս, երբ Գեղամ Սարեանի հետեւալ տողերում կարդում ենք: Կեանք ենք տուել մենք նրան Արիւնով ու քրտինքով, Ե՛ր բաց դաշտերի վրայ, Ե՛ր երկաթ սալի քով...

(«Խորհրդային Հայաստան»)

Եթէ *սալ* բառը նկարագրած իմաստափոխութեան ենթարկած չլինէր, մենք պիտի զարմանայինք՝ «Երկաթէ քարոս որն է»:

Բայց դա դեռ բոլորը չէ. *սալ* բառը նոր իմաստ ու կիրառութիւն էլ է ձեռք բերել այդ արմատով եւ-իկ փոքրացուցիչ վերջածանցով (*սալիկ*) այժմ կոչում ենք համապատասխան ձեւի կտրածք ունեցող զանազան առարկաներ (*մարմարէ սալիկ, տախտակի սալիկ, նոյնիսկ... շոկոլադի սալիկ եւ զագօջախի սալիկ*): «Մեծ մայրիկը, ճեղքելով ամբողջը, մօտենում է յուշարձանին, համբուրում քարէ սալերը...» («Խորհրդային Հայաստան» թերթ) : Ասացէք խնդրեմ, ի՞նչ կը ստացուի, եթէ «քարզմանելու լինենք» այս քարէ սալերը: «Քարէ քարե՞րը»: Կամ այս մէկը.

«Նստել էր դռան առաջ մի *սալ քարի* ու դանակով շի էր սարքում, երեւի թոռան համար» (Խաժակ Գիւլնազարեան, «Կրտսեր որդու հեքիաթը»): *Սալ քարի վրայ* «քարզմանենք»... «քար քարի վրայ»:

Իհարկէ ոչ: Հիմա մենք մոռացել ենք արդէն *սալ*-ի հին, հնագոյն իմաստը ու վերեւի արտայայտութիւնները հասկանում ենք ճիշտ այնպէս, ինչպէս սովորել ենք լսել մեր շրջապատում:

Բայց մի՞թէ *սալ*-ի հին՝ «քար» իմաստի հետ կապւած ամէն ինչ իրօք ընդմիշտ մոռացութեան ենք տուել: Ոչ: Չէ՞ որ հիմա էլ ունենք *սալայատակ*, որ բառացի նշանակում է «քարէ յատակ», եւ *սալարկել*՝ «քար զցել, (փողոցը) քարապատել»:

Շար. 1

Խոհեր մայրենի լեզվի մասին

È»½áõŸ »õ Ĩ»³ ÝùÁ
ÖÆPî ' ² èÀ ÖÆPî î °ÔàØØ

Սայա Աւագեան

Երբ խօսք է բացում լեզվի հարստութեան մասին՝ լինի դա որեւէ ազգային լեզու, թէ գրողի կամ անհատի լեզու, ապա այդ հարստութիւնը երաշխաւորում է ամենից անառջ բառերի քանակով: Առօրեայ հաղորդակցութեան ժամանակ եւս բաւականութիւն է պատճառում այն խօսքը, որը հագեցած է ճոխ ու բազմերանգ բառապաշարով: Անառարկելի է, որ պայքարը յանուն լեզվի հոմանիշ-ների ու տարատոյթների պայքար է յանուն լեզվի ընդ-հանուր մշակոյթի: Բանն այն է, որ խօսքի տկարութիւնը յաճախ առաջ է գալիս ոչ այնքան համապատասխան բառերի անգիտութիւնից, որքան որոշ բառերի գերածախս-սից՝ ի հաշիւ ուրիշների: Չգիտես ինչ կախարդանքով այս կամ այն բառը գործածութիւնից դուրս է մղում բառերի մի

ամբողջ խումբ եւ հաստատուն կերպով գրաւում դրանց տեղը: Ըստ որում, մոռացութեան են տրւում ոչ թէ յոյժ գրական, դժարամատչելի, այլ յաճախ նոյնիսկ շատ սովորական ու դիւրաձեռն բառեր:

Տեսալ միտքն արտայայտելու համար մշտապէս միեւ-նոյն բառերի օգտագործումը խօսքը գնում է այնպիսի կաղապարների մէջ, որ դրանցից դուրս ելնելը բաւական դժար է լինում եւ, որ առաւել խտտելի է, սնունդ է տալիս ոչ հայեցի արտայայտչաձեւերին:■

Շար. 1

Մեր պատանի բանաստեղծները Հայրենիք

Պատմիր մայրիկ,
Այրած սրտիցդ,
Նորից պատմիր,
Դարդերիցդ.
Ուսիր նորից,
Խօսքեր ճշմարիտ,
Տարօն գաւառի,
Իմաստուն որդուց.



Դալար Վարդանեան
«Արաքս» դպրոց
Ա. Ուղեցոյց

Կուզէի, պատմէիր
Անվերջ շարունակ,
Նայիրեան երկրից.
Չքացած փառքից.

Իժերի դաւից.
Մարտերի մեր հերոսների:

Հերոսներ անմահ,
Անմեղ, անմոռաց.
Յարթական քայլերով
Բույլներ, ժամեր, օրեր անդադար,
Եզակի կամքով,
Նրանք կուեցին,
Իրենց հաւատքով,
Քանի ապրեցին:

Մամիկոնեաններ զոհեցին,
Աւարայրի դաշտում՝ սակայն
Յաւերժ ապրեցին, ինչպէս՝
ԲաՖՖին է ասում իր պատմավէպում:

Հայոց աշխարհ՝
Ամենայն հայոց, ապաստան.
Յաւերժ կը մնաս,
Աննկուն անասան,
Մասնա լեռան պէս.
Տունն ես դու մեր,
Անփոխարինելի, անմահ՝
Նայիրեան երկիր:



Նոր տեղեկանք մրսացողութիւնը եւ ինՖլուանզան կանխելու համար

*Timoty McCall, MD
Health պարբերաբեր
թարգ. Լեւոն Ահարոնեանը*



Քանի որ մօտ է վրայ հասնի ցուրտ եղանակը եւ ինՖլուանզայի սեզոնը, առիթը պատշաճ է, որ տեղեկանանք ամէն տարի կրկնող այդ հիւանդութեան կանխման եւ բուժման նորագոյն

զարգացումներին:

Պատուաստումը (vaccination) շարունակում է մնալ ինՖլուանզայի բուժման լուսագոյն միջոցը: Թէեւ դա 100 տոկոսով ազդեցիկ չէ, սակայն որոշակի պաշտպանութիւն է հաղորդում ոչ միայն ինՖլուանզայի դէմ, նաեւ դըրականօրէն ազդում է թոքերի բորբոքման եւ այլ մահաբեր բարդութիւնների կանխման տեսակետից: Եթէ սրկւած լինէք ինՖլուանզայի դէմ պատուաստով, եւ այդուհանդերձ հիւանդանաք, հաւանաբար, շատ անելի թէթեւ կը լինեն ձեր պատանշանները: Ժողովրդի մէջ տարածւած կարծիքին հակառակ, ինՖլուանզայի պատուաստի սրկումը չի բուժում այդ հիւանդութեան պատճառ դառնայ:

Սօսիկ անցեալում, ինՖլուանզայի պատուաստումը պարտադիր էր, հիմնականում, 65-ից վեր տարիք ունեցողների, ինչպէս նաեւ շաքարախտաւորների եւ երկկամների անբարարարութիւն ունեցողներին:

Այժմ, բժիշկները գիտակցել են, թէ պատուաստումը խելացի մի քայլ կարելի է համարել այն անհատների համար, որոնք բազմազբաղածութեան կամ պատասխանատուութիւնների պատճառով չեն կարող գէթ մէկ շաքար անցկացնել բացօթեայում: Պատուաստումը խելացի քայլ է համարում նաեւ այն անհատների համար, որոնք յաճախակի շփումներ ունեն խոցելի անձանց հետ:

Վերջերս մի հսկայական պրոպականդա է ծաւալել ինՖլուանզայի բուժման երկու նորագիտ դեղամիջոցների կապակցութեամբ, որը սակայն մեծ մասամբ չի արդարացում: Zanamivir (Relenza) եւ Oseltamivir (Tamiflu) չափաւոր ազդեցութիւն ունեն հիւանդութեան ընթացքը կարճատեւ դարձնելու գծով, պայմանով, որ բուժումը սկսի ինՖլուանզայի ախտանշանների (հազ, շնչառութեան խանգարում եւ կամ բարձր ջերմ) երեւան գալուց յետոյ 48 ժամայ ընթացքում: Երկու այլ դեղեր amantadin (Simmetrel) եւ rimantadin (Flumadine), տարիներ առաջ են շուկայ հանել, ինչ- որ չափով ազդում են ինՖլուանզայի B տեսակի վրայ. այն ինչ վերոնշեալ երկու նոր դեղերը օգտակար են ինչպէս ինՖլուանզա B, այնպէս էլ դրա առաւել տարածւած տեսակի՝ ինՖլուանզա A-ի բուժման համար: Բայց վերջին դեղերը, որոնք իւրաքանչիւր դրական մատում է շուրջ 5 ԱՄՆ դոլար, ունեն կողմնակի հետեւանքներ, ինչպէս օրինակ՝ գլխապտոյտ եւ սրտախառնուր: Եւ, որովհետեւ դեռ նոր են այս

դեղերը, հաւանական է որ այլ բարդութիւններ եւս երեւան գան յետագայում: Հաշի առնելով այս կարգի անպատեհութիւնները, եւ կարծում են այդ նոր դեղերը յանձնարարելի են ինՖլուանզայի բարդութիւնների ռիսկի առջեւ կանգնած անհատներին միայն:

Վերջերս կատարւած մի ուսումնասիրութիւն պարզել է, որ ինՖլուանզայի ախտանշանները առաւել սուր են դրսեւորում հոգեկան ճնշման (stress) տակ գտնուողների պարագայում: Ուստի խիստ կարելի է, որ պաշտպանելու համար բաւարար չափով հանգիստ ունենանք եւ թոյլ տանք, որ մեր մարմնի բնական պաշտպանողականութիւնը իր դերը կատարի: Վարակազերծութիւն առաջացնելու այլ միջոցներ են համարում՝ կանոնաւոր կերպով կատարւած մարզանքը, ընկերային յաճախակի յարաբերութիւնները եւ բանջարեղէնի, պտղի ու հացահատիկների առատ սպառումը:

Երբ խօսքը գնում է ցրտառութեան (որը մարդիկ շատ յաճախ շփոթում են ինՖլուանզայի հետ) բուժման մասին, պիտի ասել, որ անցնող տարում, էական առաջխաղացքը եղել է չնչին: Այն հարցումը, թէ՛ ցինկ պարունակող շաքարահատիկները (Lozenges) իրապէս կրճատում են ցրտառութեան տեսողութիւնը եւ կամ մեղմում են՞ ախտանշանները, մնում է աստիկ վիճարկութեան միւր: Մինչեւ օրս ցինկի գործածութեան շուրջ կատարւած եւ հրապարակւած 11 վերհսկւած ուսումնասիրութիւններում ենթակաների 50 տոկոսի մօտ նշմարել է ինչ-որ չափով բարբեր ազդեցութիւն: Այդ պատճառով էլ կարծում են ճիշտ կը լինի, եթէ ցրտառութեան նախնական նշաններ երեւալու դէպքում օգտուել դեղատներում ազատ (առանց դեղատոմս) վաճառող ցինկային շաքարահատիկներից: Սակայն պիտի նշեն, որ չափից առաւել ցինկ ընդունելը կարող է վտանգաւոր լինել, ուստի դրա գործածութիւնը չափի երեք օրից անել լինի:

Տարբեր կարծիքներ կան մնանապէս վիտամին C-ի եւ էլիինասեպ (echinacea) բոյսի ազդու լինելու շուրջ: Դրանց անվտանգ լինելը նկատի առնելով, չեն կարծում ձեզ որեւէ վնաս հասնի, եթէ դրանք եւս փորձարկէք:

Ցրտառութեան դէմ օգտագործող ճարերը acetaminophen (Tylenol), շնչառութեան ուղիների հակախառնում (anti-congestants) պատճառով կաթիլներ եւ հազը զսպող dextromethorphen (Benylin DM) մեղմում են ախտանշանները, բայց չեն նպաստում, որ բուժումը անելի արագ լինի:

Նախընտրելի է ըմդումել պարզ բաղադրութիւններ, որոնք անելի էժան են, քան թէ՛ բարդ Ֆորմիլայով դեղեր, որ թանկ արժեն եւ գովազդով են վաճառում:

Ուրեմն, վերջին հետազոտութիւններով եւ նորագիտ ճարերով համդերձ, կարելի է ասել, որ էապէս շատ բան չի փոխել ինՖլուանզայի եւ ցրտառութեան դարմանման դաշտում:

Ինչպէս Ֆրանսիացիք են ասում, «որքան շատ են լինում փոփոխութիւնները, այնքան անփոփոխ է մնում ամէն ինչ»: ■

Յայտարարութիւն

Քաղաքակրթութիւնների երկխօսութեան միջազգային կենտրոնը յայտնում է, որ «Իրանահայ արևեստագետների հարիւր տարւայ նկաչութիւն» ցուցահանդէսը, որը պիտի կայանար աշնանը, տեղի չունեցաւ: Նոր թւականը կը յայտարարուի հետագայում:



Շնորհաւորում ենք համայն հայոց ՆՈՐ ՏԱՐԻՆ

Գալբսազի և փլաստիկ սազի
ԸՐ ԱՐԱՆՏԻԱՆ

ՏՐԱԽԻ և ՏԱԽՏ ԳԱԼԲԻՅԱԻ ՓԼԱՏԻԿ և ԲԱԿԱԼԻՏ

- :

- : :

Շնորհաւոր ՆՈՐ ՏԱՐԻ

ՏՈՆ ԱՓ



ԻՐՈՒՆԸ - ՈՐԴ



ՆԻ : ՏԵՐԱՆ , ՄԵԵԻԸԻԸ ԵՆՈՅԻ , 16 ՄԵՐԻ ԱՐԻ ՏՄԱՐԸ

ՏԵԼԵՆ 2527183



Շնորհաւոր ՆՈՐ ՏԱՐԻ

Գալբսազի ՐԱԲԻ

ՏՐԱԽԻ և ՏԱԽՏ ԳԱԼԲԻՅԱԻ ՏՆՆԵՒԻ

և ԳԱԼԲԻՅԱԻ PET

ՏԵՐԱՆ : ԵԱԸԸ ԱԵԼԻ ԽԻԱԲԱՆ ՏԱԶՄԱՆ ԱՓ ԿՈՅԸ

ՏՄՏՄ 7340456 ԳԱԿՏ և ՏԵԼԵՆ 11 ՓԼԱԿ

ARPI

ՏՐԿԵՒ Գալբսազի ԱՐԻԻ

DIE

ՏՈԼԻԸ ԿՆՆԸԸ ԱՆՈԱԿ ԳԱԼԲԻՅԱԻ ՓԼԵԶԻ ՏՆԵԸ
ՄԱՏՐԻՏ և ՏՈԼԻԸ ՓԵԿԵՒԱՒ ՓԼԵԶԻ ԽՈԸՐՐՈ

ՏԵՐԱՆ : ԵԱԸԸ ԱԵԼԻ , ԽԻԱԲԱՆ ՏԱԶՄԱՆ ԱՓ ,

ԽԻԱԲԱՆ 5 ՏԻԸԸԱԻԻ ԲՆ ԲՏ 8 ԵՆՈՅԻ ՏՄԱՐԸ 226

ՏԵԼԵՆ : 7344497 ԳԱԿՏ : 7344497





Ժամանց

ԽԱՉԲԱՌ- ՀԱՄԱՐ 12

Կազմեց՝
Գագիկ Անդրեասեանը

ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Հայ ժողովրդի ազատագրական պայքարի անյաղթ հերոսը:
2. Խնջոյքի սեղանի կառավարիչ, սեղանապետ- ո՞րտեղ- հարւած:
3. Նախապաշարումներից ու աւանդական սովորութիւններից չկաշկանդուող - մետաղեայ կոթարող աման՝ ուտելիք տապակելու համար:
4. Մանր կալածատների տիրոջը մերձատր արեւելքում- «մայր» բառի կրճատած կոչական ձեւ- հարեմ:
5. Դարձեալ, աւելի եւս կեղծ անուն- ի՞նչու:
6. Բնական պայմաններով անապատի եւ տափաստանի միջին տեղը գրաւող աշխարհագրական գօտի- ապակեայ նեղերան անօթ՝ հեղուկների կամ գազի համար:
7. Գեղարդով խփած- իզական անուն:
8. Գեղանկարչութեան մէջ՝ նկարելու համար գործածուող նիւթ- հասարակական կառուցածք- ո՞րտեղ:
9. Յարական Ռուսաստանում՝ ռազմական միջնակարգ դպրոցի սանջհամակրել, չսիրել- իրանահայ միութիւններից:
10. Ազնական, բարձր դասի պատկանող անձ- մի բան մէկին յանձնել- այստեղ:
11. Շարունակ, անդադար, միշտ- ազոտի ձայն- տուփ՝ որտե՛ղ իր մէջը դնելու եւ պահելու համար:
12. Մտոտ, անպատիւ- մուգ կարմիր- արական անուն:
13. Միջավայր, շրջապատ- ախտորոշում:
14. Բնատրոսփին, հոգեկան կերտածք- ցուցական դերանուն:
15. Ժամանակ- Հայաստանի վանքերից:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2							■			■					■
3														■	
4				■			■	■							
5			■	■								■			■
6										■					
7		■									■				
8					■								■		
9						■									
10		■					■			■					■
11				■			■		■						
12		■						■				■	■		
13															
14									■	■			■	■	
15	■					■		■							

Ուղղահայեաց

1. Հայ նշանոր մանկագիր, թարգմանիչ եւ մանկավարժ:
2. Գեղեցիկ ու քնքուշ շարժումներով՝ կեցածքով- երկինջիներից- խառն (կաս):
3. Ոչխարի մարմնի ետեւի կախած ճարպային մասը- հայ ժողովրդի 1918 թականին մղած հերոսամարտերի վայրերից մէկը:
4. Խառն (արտ)- հողը փորելու գործիք, բրիչ- իզական անուն:
5. Ալմաստ- Եղիշէ Չարեմցի գրական գործերից:
6. Նամակների ժողովածու- արեւ եւ նոյնպէս հայկական տոմարի ութերորդ ամիսը:
7. Գործիք, սարք- տանուտերի կարգադրութիւնները կատարող պաշտօնեայ:
8. Թռչունների կեր դարձող հատիկեղէն- հաւատի պաշտպանութեան համար զոհած մարդ:
9. 24 ժամ- մի տեղ հաւաքել, ամբարել- դա, այդ:
10. Մածնաջուր- ցածից՝ առաձգական թել՝ զանազան նւագարանների վրայ- սալօջախ:
11. Մահմեդականների աղօթքի հրաւեր- կրկնւած ձայնաւոր:
12. Ծովափին յատուկ կառոյցներով տեղ, որտեղ կանգ են առնում նաւերը- զնալու հրամայականը:
13. Տենչալի, փափագելի- նիստ, ժողով:
14. Թանկագին քար- փնտրում, պրպտում- վարդագլխների ընտանիքին պատկանող ծառ կամ թուփ:
15. Բացառական հոլովի մասնիկը- քնքուշ, նուրբ կազմւածքով:

ԼՈՒԾԵ
ԽԱՉԲԱՌ
ՍՏԱՅԷ
ՆԻՐ

Խաչբառ համար 11-ի
լուծւած տարբերակը
տեսնել՝ էջ 8-ում:




Մարզական

Ազատ Վարժություններ


Ամեն մարդ առողջ ապրելու համար, պետք է անպայման ամենօրեայ մարզական վարժությունների ծր-րագիր ունենայ: Իհարկէ այդ վարժությունները պետք է կատարւեն ըստ կանոնաւոր ծրագրի եւ համապա-տասխան անձի Ֆիզիկական վիճակին:
Այս համարից սկսած հերթաբար կառաջարկենք բոլորի համար օգտագործելիք վարժություններ:

Վարժություն 1


Ա- Աջ ծունկը քաշէք դէպի կրծքավանդակ մինչ այն աստիճան, որ ցու չզգաք: Այդ դիրքում մնացէք մինչեւ 5 վայրկեան, այնուհետև վերադարձէք նախկին դիրքին:



վայրկեան, այնուհետև վերադարձէք նախկին դիրքին:



Բ- Նոյն վարժությունը կատարէք ձախ ոտքով:



Գ- Այժմ վարժությունը շարունակէք երկու ոտքով: Վերոյիշեալ վարժությունները ամեն փորձին կրկնէք նախ 5 անգամ, այնուհետև կրկնման քերը աւելացրէք մինչեւ հասնի 10-ի:


Այս փորձերը կատարելու ժամանակ հարկ է նկատի առնել հետևեալ խորհուրդները.

1. Երբէք չօգուտել ձեռքերից, ծնկները ծալելու հա-մար:


2. Ծնկները կամաց շարժել եւ չձգել նրանց: Վարժու-թիւնների ընթացքում մէջքը յատակից չպետք է բաժան-վի:

Վարժություն 2


Ա- Պառկած դիրքում (մէջքի վրայ), ձեռքերը ծալէք գլխի ետևում, այնպէս որ բազուկները հպի յատակին:



Բ- Աջ ոտքը ծալած դիրքում դրէք ձախ ոտքի ետևը, այնպէս որ ձախ ոտքի ծունկին յենի:



Գ- Աջ ոտքով ձախ ոտքը սեղմէք, այնպէս որ դիպչի յատակին, այդ դիրքում մնացէք մինչեւ 5 վայրկեան, այ-նուհետև վերադարձէք նախկին դիրքին:



Դ- Նոյն փորձը կատարէք ձախ ոտքով: Սոյն վարժությունների ընթացքում պետք է նկատի առնել հետևեալ կէտերը:

1. Փորձերի ընթացքում ձեռք ծնկները պետք է հպեն յատակին, բայց հակառակ դէպքում չպիտի յուսահատ-ւել, շարունակէք փորձերը մինչեւ դրա ստացելը:

2. Աշխատէք ձեռք քիկուց չբաժանի յատակից: Փորձերը կատարէք բազուկների օգնութեամբ:

Կազմեց Առլետ Վարդումեանը



ՖՈՒՏԲՈՒԼԻ ԸՆԵՐԱԳԻՏԱՐԱՆ

ԳՐԻՆՉԱ ՄԱՆՈՒԷԼ ՖՐԱՆՍԻՍԿՕ ՍԱՆԹՈՍ

ՍԱՆԹՈՍ (1933-83, Բրազիլիա)- Աջ եզրա-յին յարձակող, Ֆուտբոլի պատմության լաւագոյն խաղացողներից: Չնայած Ֆիզիկական արատին (աջ ոտքը ձախից կարճ էր ճամուլ), տիրապետում էր զնդակը վարելու բարձրագոյն տեխնիկայի, իրատեսակ խաբսերի, դիպուկ հարածների, գրեթէ «անոթալի» էր պաշտպանների համար: Հանդէս է եկել «ԲոտաՖոգո» (1953-64), «Կորինթիանս», «Ֆլամենգո», ինչպէս նաեւ Ֆրանսիական եւ իտալական քիւմերում: «ԲոտաՖոգոյի» կազմում մասնակցել է 579 խաղի, խփել 249 գոլ: Ազգային հաւաքա-կանում անցկացրել է 57 խաղ, խփել 15 գոլ: 1958 եւ 1962թթ աշխարհի չեմպիոն (1962-ի լաւագոյն խաղացող), 1966 առաջնութեան մասնակից:



ԳԵՐՈՐԳԵՆՆ ՍԱՆԱՍԱՐ (1951-89)

Աջ պաշտպան, այնուհետեւ կիսապաշտպան: Մպորտի վարպետ: Տեխնիկայէտ լաւ պատրաստած, տակտիկայէտ հնուօրէն գործող Ֆուտբոլիստ, գրոհների եռանդուն մասնակից: 1970-78թթ. Երեսանի «Արարատի» կազմում հանդէս է եկել ԽՍՀՄ առաջնութեան բարձրագոյն խմբում: 1973թ. ԽՍՀՄ չեմպիոն, 1976թ. գարնանային առաջնութեան արծաթ մեդալակիր, 1973 եւ 1975թթ. ԽՍՀՄ գաւաքակիր: Անց-կացրել է 160 խաղ, խփել 4 գոլ: Խաղացել է նաեւ ԽՍՀՄ պատանեկան ու երիտասարդական հաւաքականներում:



ԳԵՐՐՈՆ ՆՈՒՆՅԵՍ ԴԷ ՕԼԻՎԵՅՐԱ (ծն. 1941թ. Բրազիլիա)

Վիսապաշտպան, հնուօրէն կատարում էր նաեւ պաշտպանի ու յարձակողի պարտականութիւններ: Աջի էր ընկնում հաշիւեկատ փոխանցումներով եւ ձախ ոտքով ուժեղ հարածներով: Հանդէս է եկել «Ֆլամենգո», «ԲոտաՖոգո», «Ման Պաուլու» քիւմերում: Ազգային հաւաքականում անցկացրել է 83 խաղ, խփել 23 գոլ: 1970թ. աշխարհի չեմպիոն, 1966-ի մասնակից:

ԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱԸՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Վերջին ժամանակներս կտրուկ մեծացել է Ֆուտբոլիստների մարզումային ու խաղային բեռնածնութեան ծաւալը, նրանց կատարած վարժութիւնների քանակը: Ֆուտբոլիստը որչա՞փ կարող է ենթարկուել այս կամ այն աստիճանի բեռնըվածութեան, ի՞նչ ունակութիւններ ունի նրա օրգանիզմը: Այս եւ նման հարցերը լուծուում են գիտական վերահրակողութեամբ, ժամանակից սարքաւորումներով, հետազօտական այլ միջոցներով: Ուսումնասիրում եւ գիտականօրէն են կազմակերպում մարզումները, բարելաւում է մարզիկի ֆիզիկական ու հոգեբանական պատ-

րաստականութիւնը, մեծ ուշադրութիւն է դարձում նրա շարժողական գործողութիւնների արդիւնաւէտութեան բարձրացմանը: Վերահսկողութեան գիտական միջոցն առաջին հերթին Ֆուտբոլիստների մարզումների ու խաղերի մանկավարժական դիտարկումներն են, նրանց առողջական եւ մարզական վիճակի ստուգումը, թեստաւորման անցկացումը եւ այլն: Գիտական վերահսկողութեան ձեւերն ու մեթոդները տարբեր են կախած մարզումային շրջանից, Ֆուտբոլիստների որակաւորումից եւ տարիքից: Այսպէս՝ նրանց ընդհանուր եւ յատուկ պատրաստականութեան աստիճանը որոշելու համար օգտագործում են ստուգիչ տարբեր վարժութիւններ՝ թեստեր, որոնք կարող են անցկացուել ինչպէս լաբորատորիաներում, այնպէս էլ՝ բնական պայմաններում: Ա) Մթեփ թեստ (աշխատունակութիւն), բ) հեծանաւերգումետր (աշխատունակութիւն), գ) վազք 12 րոպէ՝ ըստ Կուպերի (ընդհանուր դիմացկունութիւն), դ) վազք 5x30մ՝ երկու անգամ (արագութեան դիմացկունութիւն), ե) 7x50մ մաքրքավազք (յատուկ դիմացկունութիւն), զ) մեկնարկից 15մ վազք (մեկնարկային արագութիւն), է) ընթացքից 15մ վազք (տարածական արագութիւն), ը) բարձր մեկնարկից 30մ վազք(մեկնարկային արագութիւն), թ) գնդակով 30մ վազք (զնդակը վարելու մակարդակը), ժ) հեծուից հարաւածներ (տեխնիկական պատրաստականութիւն), ի)տեղից եւ ընթացքից հարածներ դարպասին (ֆիզիկական եւ տեխնիկատակտիկական պատրաստականութիւն, յ) ցատկ դէպի վեր (ցատկունակութիւն), յս) տեղից հեռացատկ եւ հնգացատկ (արագաուժային ունակութիւններ): Թարկւածից բացի, կան նաեւ այլ ստուգիչ վարժութիւններ:

Խաղաշրջանի հետազօտութեան համար գրանցում են առանձին խաղացողների, խաղային օղակների, կամ ամբողջ քիմի տարբեր ցուցանիշներն ինչպէս խաղակէտերում, այնպէս էլ ամբողջ հանդիպման ընթացքում: Դրանց թիւն են դասում շարժողական գործունէութեան (քայլքի, վազքի, ցատկերի, զնդակով տեղաշարժերի քանակը...) եւ տեխնիկատակտիկական գործողութիւնների քանակի ու որակի (զնդակի կասեցում, հարածներ դարպասին, փոխանցումներ...) ուսումնասիրումն ու վերլուծութիւնը: Դա կարող է արել տեխնիկական միջոցների օգտագործմամբ (մագնիտաՖոն, տեսանագնիտաՖոն եւ այլն):

Տարբերում է վերահսկողութեան երեք տեսակ՝ փուլային, ընթացիկ եւ օպերատիւ:

ԳԼԵՐՈՎՆԻԿՈՒՆՅՈՒՆ (ծն. 1909թ.)

որպէս կիսապաշտպան հանդէս է եկել Մոսկւայի «Տորպեդ», «Լոկոմոտիւ» եւ այլ քիւմերում: Աւարտելով մրցելոյթները՝ անցել է մարզական աշխատանքի, նախ՝ վերը նշած քիւմերում, ապա Ալմա Աթայի «Կայրաթում», Երեսանի «Արարատում» (1971-72): Ժամանակին խորհրդային Ֆուտբոլի լաւագոյն տեսաբաններից էր, քաջատեղեակ էր տակտիկական նորամուծութիւններին, առանձնաւորում էր տեսական հարուստ գիտելիքներով, որոնցով իր ներդրումն ունեցաւ «Ա-րարատի» յաջող մրցելոյթներում: 1971թ թիւը նրա դե-կավարութեամբ արծաթ մեդալակիր դարձաւ ԽՍՀՄ առաջնութիւնում: Ռուսաստանի եւ Հայաստանի վաստա-կաւոր մարզիչ: Ներկայումս խորհրդատու է Մոսկւայի «Տորպեդ» քիւմում: ■





Երիտասարդի համար



ԱՆՏԱՐԿՏԻՂԱՆ ՍԿՍՈՒԽ Է ՆԱԽԱՐԿԵԼ

(Գիտական Ֆանտաստիկա)

«Շար Լախրին համարից»

Պրոֆ. Ռ. Ղազարեան

Երբ Ձեյմսը շարժիչն անջատեց, ընկերները պարզ լսեցին «Կծիկի» կողմից եկող աղմուկը՝ ասես բլթբլթոցի և թշնոցի խառնուրդ:

- Այս ի՞նչ սառանայությունն է,- կարկամած վիճակից դուրս եկաւ Ձեյմսը:

- Կարծես եռացող ջրով հսկայ կաթսայ լինի,- բաւականին ճշմարտաման համեմատեց Մարտինը, իսկ Դէյլը յարմար գտաւ անզամ կատակել:

- Միգուցէ ռուսներն են ռետինէ դողերով հսկայ ինքնայեռ բաց թողել: Նրանք սիրում են աշխարհում ամեն ինչի ամենամեծը:

- Անհետքերովներ դուրս մի տուր,- կարեց Ձեյմսը: Աղմուկ-դրոշմունս ուժեղանում էր: 10 րոպէ անց սուլող թշնոցն անտանելի դարձաւ, այնպէս որ ընկերներն ըստիպած եղան ականջներն ափերով փակել: Մայիտակ հրէշը՝ 10 մետր լայնքով գոլորշու սիւնը, դժոխային աղմուկով սողում էր իրենց առջեւ մի հարիւրյիսուն մետրի վրայ: Ապշած ընկերները, ափերն ամուր սեղմած ականջներին, սարսափահար աչքերով և առանձնապէս չջանալով հասկանալ, թէ ինչ է ասում դիմացինը, ինչ որ բան էին բղաւում: Թում էր այդ մղձաւանջին վերջ չի լինի: Մակայն «կծիկն» սկսեց հեռանալ, թեքելով դէպի աջ: Երբ այն հեռացաւ մի 500-600 մետր, հնարատր դարձաւ ափերը հեռացնել ականջներից:

- Դուք ինչ որ բան հասկանում էք,- շփոթած հարցրեց Մարտինը:

- Աւելի մտենանք,- պատասխանի փոխարէն գլխով «կծիկի ուղեծրի» կողմը, որից դեռես գոլորշի էր բարձրանում, ցոյց տուեց Ձեյմսը: Երբ մինչ «ուղեծրը» 40-50 մետր էր մնացել, ընկերները նորից զարմացած բացականջեցին, իսկ Ձեյմսն ակամայ կանգնեցրեց ամենագրեացը: Անխոս դուրս ելան և ոտքով առաջ անցան:

Իրենց առջեւ հարթ եզրերով, հալած սառոյցի մի խրամատ էր բացել, մօտ 10 մ լայնութեամբ: Բարձր ջերմաստիճանը լանջեր էր ստեղծել դէպի խրամատը, նրա եզրին մօտենալը վտանգատր էր՝ յայտնի չէր, թէ ինչ խորութիւն ուներ այն:

Ձեյմսն առանց մի խօսքի, յանկարծ շրջեց եւ վազեց դէպի ամենագնացը: Դէյլը եւ Մարտինը անհանգստացած միմեանց նայեցին, սակայն թեքեացած շունչ քաշեցին, երբ նա քրքրելով բեռնախցիկը, նրանց կողմն ուղղուեց, ճոպանի կաժը ձեռքին: Լուռ քանդելով այն, Ձեյմսը մի ծայրը խցկեց Մարտինի ձեռքի մէջ եւ, կապելով միս ծայրով, զգուշօրէն գնաց դէպի խրամատը:



Ապահովութեան համար Դէյլը նոյնպէս բռնեց պարանից, օգնելով Մարտինին: Վերջին մետրերը Ձեյմսը չորեք-քաթ անցաւ: Նայելով խրամատի եզրից, նա ետ շրջելով, գոռաց. «Հաստատ մի յիսուն մետր կայ... յիստակին ջուր է երեսում...»:

- Ետ սողայ, թոյլ տուր մենք էլ նայենք,- խնդրեց Մարտինը: Ընկերներն հերթով համոզեցին, որ Ձեյմսը չէր ստում՝ հաւասարահարթ պատերով խրամատը յիսուն մետրաչափ խորութեամբ իջնում էր, ընդ որում թեթեւակի թեքութեամբ մտնելով նրանց տակ:

- Հարկատր է յաղորդել կայանին,- յանկարծ ըստափվեց Դէյլը:

Աշխուժօրէն քննարկելով ամենաանհաւանական վարկածներ, ընկերները մօտեցան ամենագնացին: Դէյլը միացրեց ռադիօկայանը եւ չէր հասցրել արտաբերել ազդականչը, երբ լսափողի մէջ անհամբերութեամբ ընդհատեցին. «Ասացէք, ի՞նչ կայ այդտեղ»: «Օհո՛: Ըստ երեւոյթին այնտեղ էլ էին ինչ որ բան տեսել, եթէ հենց ինքը՝ պետն է լսափողի մօտ»,-մտածեց Դէյլը: Յետոյ իրար խանգարելով, նրանք բղաւում էին բարձրախօսի մէջ, նկարագրելով տեսածը եւ անկեղծօրէն խոստովանելով, որ ոչինչ չեն հասկանում: Յանկարծ Ձեյմսը, զարմացած բացականջելով, քաշեց ռադիօկայանի վրայ կոսցած Դէյլի ուսից: «Կծիկը» վերադառնում էր... Ինչպէս յետոյ պարզուեց, նա գնում էր ճիշտ խրամտի երկայնքով, որը՝ ինչպէս պարզեց «կծիկի» հեռանալուց յետոյ, բաւականին խորացել էր... Յետագայ 5 ժամերի ընթացքում «կծիկը» եւ 3 անգամ «անցաւ» խրամատով մէկ, արելի ու արելի խորացնելով այն: Այդ ժամանակ բոլոր նրանք, ովքեր ազատ էին հերթապահութիւնից, եկան ամենագնացի մօտ: Իսկ յետոյ կատարուեց ամենաանհաւանականը՝ քարացած ակամատեսների աչքերի առջեւ այն ամենը, ինչը խրամատի միւս կողմում էր, սկզբում դանդաղ, ապա արագանալով շրմփաց ծովի մէջ: Բոլորն ակամայ ետ քաշուեցին, իսկ յետոյ նրանց խաչքրեց մի ահաւոր որոտ, դէպի երկինք նետուեց ջրի հեղեղատը եւ բազմակիլումետրանոց սառցաթեկորը դուրս լողաց ովկիանոսում, առջեւից քշելով սարսափազրու ալիքը:

Այդ պահին դեռ մայր չնտած արեւի իջաւ հորիզոնի ամենացածր կէտի վրայ: Մօտ 2 ժամում ուրիշ ոչինչ տեղի չունեցաւ, եւ բոլորը կայան վերադարձան, բորբոքած քննարկելով տեսածը: Իսկ «յաջորդ օրը», այսիքն երբ Արեւը հորիզոնից վեր բարձրացաւ, «Կծիկը» նորից ետ ու առաջ արեց, այս անգամ խրամատը կէս կիլոմետր արեւի մօտ գծելով՝ ընդգրկելով այն տեղը, ուր նախորդ օրը կանգնած էր ամենագնացը:

Կատարածի մասին տեղեկացան Անտարկտիդայի բոլոր կայանները: Նրանցից իմացաւ ողջ աշխարհը: Բոլոր ռադիօ եւ հեռուստակայանները կրկնում էին նորութիւնների տեսութիւնը, բերելով նշանատր գիտնականների մէկ նաբանութիւնները: Մինչ մի մասը տարբեր վարկածներ էր առաջ քաշում հանելուկային երեւոյթի մասին, միւսները հաշիւարկեցին, որ եթէ այդ ընթացքը շարունակի մինչեւ ողջ Անտարկտիդական սառցավանդակի հայտնուի, ապա համաշխարհային ովկիանոսի մակարդակը կը բարձրանայ 100 մետրով, իսկ այդ նշանակում է, որ ջրի տակ կը յայտնուեն ցամաքի հսկայական տարածութիւններ եւ, մասնատրապէս, այնպիսի քաղաքներ,



Երիտասարդի համար



ինչպիսին են Նի Եօրքը, Լոնդոնը, Տոկիոն, Լենինգրադը, Տայիվը, Բուստոնը եւ շատ ուրիշներ:

- Լաւ է, որ հիմա սառը պատերազմի ժամանակները չեն,- կծու հեզմանքով նկատեց Տոկիլը,- թէ չէ ամերիկացիները կը կարծէին, թէ դա մեր արածն է:

- Իսկ մերոնք կը պնդէին, որ այդ նրանց հնարքներն են,- բնորոշ էստոնական առոգանութեամբ արձագանքեց բարձրահասակ, հանգիստ Անդրեսը, ինչպէս, ասեմք, պատահեց, երբ առաջին անգամ սկսեցին խօսել թռչող ափսեների մասին:

- Ի՞նչ էք շատախօսում, տղերք,- միջամտեց կենսաբան Ռուզանը,- աղտոլ համընդհանուր է... ձեռնտու չէ ոչ մէկին:

Մի բանում էին համընկնում գիտնականների կարծիքները. դատելով «Կծիկի» յայտնելու պահից, այդպէս կարող է աշխատել միայն արեւի էներգիան կիզակէտող, ինչ որ կառավարող հայելի: Այդ ենթադրեալ հայելին պէտք է ունենայ աներեւակայելի մեծ չափսեր եւ ղեկավարի անգերազանցելի ճշտութեամբ:

Միաժամանակ պէտք է, որ այն «կախած» լինի տիեզերքում շատ մեծ բարձրութեան վրայ:

Այդ բանից քիչ անց, խորհրդային անձնակազմը ուղեծրից հաղորդեց, որ Անտարկտիդայից վեր՝ մօտաւորապէս 20 հազար կիլոմետր բարձրութեան վրայ, տեսնում է ինչ-որ փայլուն սաւան: Կոպիտ գնահատութեամբ նրա չափսերը կիլոմետրից պակաս չեն...

«Օհո»,-ասաց օդերևութաբանը եւ ինչ որ բան սկսեց հաշուել հաշարկիչ վրայ: «Միլիոնից անել կիլովատի կարգի է... վատ չէ... Պարզ է, թէ ինչու է այդպէս եռում եւ հալում...»:

- Ի՞նչ էս այդտեղ փնթփնթում,- չհամբերեց Տոկիլը:

- Արեգակնային «ինքնատի» հզօրութեան մօտաւոր հաշին արեցի,- պատասխանեց օդերևութաբանը:

Յաջորդ պարոյրում, տիեզերանաւի ընդունման կէտում լսեցին տիեզերագնացի յուզած ձայնը. «սաւանի վերելում, մօտաւորապէս 10-15 կիլոմետրի վրայ կախուեց ինչ որ առարկայ...», - նա խօսքն ընդհատեց, ապա մեղաւոր շարունակեց. «թռչող ափսէի նման...»:

Իսկ այդ ժամանակ Անտարկտիդայում եզրագծի ուղղութեամբ, որը Ամերիկայի հարաւային վերջատրութեան դիմաց է, աշխատանքը եռում էր ուղղակի եւ փոխարեակն իմաստով: Սառցէ սարերը շուտ էին գալիս ովկիանոսի մէջ, զոհելով ու խուճապահար անելով բազմաթիւ փոկերի, պինգվինների, էլ չասած ստորջրեայ բնակիչների մասին: Ովկիանոսի մակերդակի որոշակի բարձրացումն արդէն նկատեցին ոչ միայն Հարաւային, այլ Կենտրոնական Ամերիկայում:

ՄԱԿ-ը ԵՌԻՆԵՄԱԿՕ-ի հետ համատեղ, արդէն 3 օր անց արտակարգ ժողով հրաւիրեց, լայնօրէն ներգրանելով գիտնականների եւ կառավարութիւնների ներկայացուցիչների: Հանգեցին նրան, որ առաջին հերթին պէտք է ամէն կերպ դադարեցնել Անտարկտիդայի սառույցի քայքայումը: Առանց երկար- բարակ մտածելու որոշեցին ճառագայթի ճանապարհին՝ Երկրի եւ հայելու միջեւ, ստեղծել ցրող ամպ: Հէնց յաջորդ օրը, չընդհատելով խորհրդակցութիւնը, Բրազիլիայի, Արգենտինայի եւ ԱՄՆ-ի կառավարութիւնները տեղադրեցին կարկտահար հրանօթներ: Սկսեց ճառագայթի գնդակոծումը արկերով,

որոնք լցոնած էին կլանող եւ ցրող աէրօզոլներով: 7 կիլոմետր բարձրութեան վրայ պայթելով, նրանք երկար ժամանակ օդի մէջ կախուող մութ ամպեր էին արտանետում: Ճառագայթը թուլացաւ եւ տարածեց մի 100 մետրով: Սակայն մինչեւ օրայ վերջը այն շարունակամ էր ետ ու առաջ վազել, կարծես չնկատելով իր արածի անարդիւնաւետութիւնը: Բայց արդէն միւս օրը պարզեց, որ ամպը մի քանի բուլբուլի անհետ վերանում էր, սառույցի վրայ նստում էր մուգ փոշի, որից յետոյ սառույցը ատիւ արագ է հալում, քանի որ այդ ծածկոյթը կլանում էր ճառագայթները եւ տաքանում...

«Հարկաւոր է քայքայել հայելին», եզրակացրեց ՄԱԿ ու մեծամասնութիւնը: Եւ դէպի Անտարկտիդա ուղեւորեցին հրթիռներով բեռնած տրամասարտային ինքնաթիռները: Այդ օրերին եւս 3 «կտորներ» շրմփացին ովկիանոսի մէջ, դէպի Ամերիկայի ափերը քշելով կատաղի ջրային ալիքներ:

Առաջին հրթիռը պատռեց «հայելին» եւ պայթեց նրա հետեւում: Երկրորդը՝ պայթեց «հայելու» շրջակայքում եւ, ինչպէս հաղորդեցին արբանեակից, նրան պատառ-պատառ արեց: Երկու օր Անտարկտիդայում խաղաղ էր, իսկ յետոյ... անվթար հայելին սկսեց աշխատել նախկին «բարեխղճութեամբ»:

Այդ ժամանակ ելոյթ ունեցաւ աշխարհառջակ Նոբելեան դափնակիրը եւ այն միտքն արտայայտեց, որ հայելին նախագծում եւ ղեկավարում է հայելուց վեր կախւած «ափսէի» կողմից, որը նկատել էին մեր տիեզերագնացները: Հետեւաբար, որպէսզի կանխի նրա գործունեութիւնը, անհրաժեշտ է խախտել «ափսէ»-հայելի կապը:

- Ի՞նչ է, նրանք այնքան բութ են կամ դաժան, որ այդ ամենից յետոյ է՞լ չեն դադարում,- Երկնտում էին թերահասատները:

- Իսկ դուք համոզուած էք, այնտեղ բանական էակներ կան,- փորձում էր հերքել դափնակիրը:

Առաջարկեց շեղել հայելու բարձրութեանը մօտ ուղեծրով պտտող մշտական արբանեակներից երկուսի ուղեծրերը այնպէս, որ նրանք յայտնուէին «ափսէի» եւ հայելու միջեւ: Ընդ որում՝ որքան հնարաւոր է «ափսէին» մօտ:

Տիեզերական թռիչքների ղեկավարման կենտրոններում եռուզեռ սկսեց եւ 3 օր անց արեգակնային մարտկոցների լայն թելերով երկու ստացիոնար արբանեակներ տեղաւորեցին «ափսէի» տակ: Հարաւային Ամերիկայի աստղադիտարանի դիտորդները, ինչպէս նաեւ արբանեակի անձնակազմը, որը ժամանակին յայտնաբերել էր ափսէն, վկայեցին միեւնոյն բանը՝ հայելին կորցրեց ձեռք, ծամուեց եւ ցրեց:

Քիչ անց նոյն այդ անձնակազմը յուզած հաղորդեց, որ «ափսէն» իրենց աչքի առաջ հարկեց: Ոչ թէ թռաւ, այլ յանկարծակի անհետացաւ: Այդ յայտարարութիւնն ընդունեց առանց պատշաճ ուշադրութեան: Մտածեցին՝ «հնարաւոր է անձնակազմը արեւի շողերի մէջ, պարզապէս, տեսադաշտից կորցրել է «ափսէն», իսկ յետոյ չի տեսել հեռաւորութեան պաճառով»: